

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԷժ տերութեանց ձգտումներուն վրայ. — ֆաղաքական և ընկերական քանի մը դիտողութիւններ Բ. ԳԵՉԵԱՆ
ԿԵՆՍԱԳԱԿԱՆ. Ֆրանսական Ազգական — Երեք նոր ազգականներ. (Վիգ-
թոր Տիպիտի — Ժոզեֆ Պէրթուս — Լիօն Վիգ — ՀԱՆԷՎԻ)
ԱՇԽԱՐՀԱԳՔԱԿԱՆ. Ահարկ մը վերջին աշխատութեանց վրայ 3. Ե.
ՆՈՐԱԷՊ. Հմայեալ ծածանը (ԷՏ. Վիլիլի) Թարգմ.
ԲԱՆԱՍՏԵՂՆԱԿԱՆ. Քաղաքացիական պայքարի կարեւոր — Իւրիլ (ԲԱԶՄԱՎԷՊ)
ՔԱՂԱՔԱՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաքին, Ներքին, Ազգային
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻՏ ՏԸ ՄՕՆԹԷԲԷՆ) Թարգմ. Մ. ԶՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԵՒ ՔԱԼԱՆՆԵՐՈՒ — տարեկան Կէս ոսկի Օսման .
» » վեցամսեայ Բառ » »
ՄԷԿ ԹԵՐԹԻՆ ՔԻՆՆ Է 60 փարայ
Օտար քաղաքացի համար տարեկան 12 փարայ
» » վեցամսեայ 6 »
Թղթատարութեան Գալսք տարեկան Դան. արծ. 15
վեցամսեայ » » 7 1/2

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Նորատուրկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1884

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 14 Դեկտեմբեր

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

ամիս և անարայի վրայ (պանքայի)	110
3 » » » (վճռակն)	109 3/8
3 » Բարի, Ի » (պանքայի)	22 92 1/2
» » » (վճռակն)	23

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Քոնսուլիտէ

Երէկ երեկոյ գոցուեցաւ	Գ. Զ. Կ. Կ. — —
Պօրնային գոցուեցին վերջը	» — —
Բերայի մէջ	» — —
Առաւօտուն բացուեցաւ	» 8 37
Բարձրագոյն գին	» 8 37
Նուազագոյն	» 8 37
Կէս օրին	» 8 37
Խնիքիէ Եգիպտական (Գ. Կ.)	— —
Երէկ երեկուն գոցուեցաւ	— —
Բերայի մէջ	— —
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	70 40
Կէս օրին	70 42 1/2
Հէվալէսիդ	45
Բէքօր գոնսուլիտէի	— —
» Խնիքիէի	— —
Փոխառութիւն 1863	Ֆր. 73 50
» 1865	» 56 75
» 1869	» 49 50
» 1873	» 43 50
Պօն տիւ Թրէզօր	Անգլ. Լ. 24
Բումբէլի երկաթուղի	Ֆր. 44 25
Օպիկոսիօն տը Բրիտիթէ	» 386
Բամբէթուղի Լաւրիօմի	» 68

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօսիթէ Ժէնէրալ	Անգլ. Լ. 3 28
Քրէտի Ժէնէրալ (Գ. Կ.)	» 7 4
Պանք տը Գոնս	» 5 25
Սօս. Շանտ է վալէօր	» 3 25
Թրամուէյ	» 295

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	ՂԸ. 400
20 Ֆրանքոն	» 87 32
Անգլիական ոսկի	» 110 20
Բօլ Իմպերիալ	» 90
Քրիմից	» 54 45
Իռլանդի Թրաքամ	» 8 76
» արծաթ	» 89 40
Ֆիօրին	» 9 2
Մէք. արծ. (տարբ.)	» 108 2

Վեցնոց	» 102 35
Հինգնոց	» 103
Մէթալիք	» 99
Պղինձ	» 780
Թղթադրամ	» 3200

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 24 Դեկտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ	
Անգլ. քոնսուլիտէ գոցուեցաւ	109 3/16
Օսմ. բացուեցաւ	8 3/16
» գոցուեցաւ	8 1/16
Օսմ. փոխառութիւն 1865	41 1/4
» 1869	9 3/8
» 1871	68 1/2
» 1872	49 1/4
» 1873	8 3/4
Փոխառութիւն 1877	81 1/4
Պանք Օթօման	43 3/4
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	95
Եգիպտական միացեալ (Խնիքիէ)	63 1/2
» առանձն. (բրիտիթէ)	87 1/2
Տպրա Սանիէ	62 1/4
Տօմանիալ (փոխառ. Բօնիլտ)	87 1/2
Հունգարական պարտաթուղթ 1877	—
Փոխառութիւն Բարիդի վրայ	25 50
Վիեննա, 24 Դեկտեմբեր ժամ 40 վ. 30 երեկոյ	
Փոխառութիւն Լոնտոնի վրայ	123 80
Օսմանեան երկաթուղի	24 50
Բարիդ, 24 Դեկտեմբ. ժամ 3 վայր. 15 երեկոյ	
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	109 02 1/2
» 3 0/0	78 72 1/2
Օսմանեան քոնսուլիտէ բացուեցաւ	8 42 1/2
» գոցու. (գ. Կ.)	8 42 1/2
» 1865	56
» 1869	49
» 1873	44
Օսմանեան երկաթուղի	45
» Բէթի Բամբէթուղիք	54 02 9
Պանք Օթօման	597 50
Գրէտի Լիօնէ	522 50
» Ֆիօնիէ	1334 25
Բամբէտոմ Լիօնի (գոնք. կար.)	1233 75
Սուէզի ջրանցք	1837 50
Ռուսական 5 0/0 1877ի	100 3/4
Իտալական Ռանթ	99 02 1/2
Եգիպտական միացեալ գոց	321 25
Սպանիական (արտաքին)	60 1/4
Բրիտիթէ Թիւրք	387 50
50/0 Հելլենական	357 50
Չէք Լոնտոնի վրայ	25 32

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33րդ ՏԱՐԻ

1884 ԴԵԿՏԵՄԲԵՐ 15

ԹԻԻ 3748

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՄԵԾ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ ԶԳՏՈՒՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱԿԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախընթաց յօդուածի մը⁽¹⁾ մէջ փորձեցինք ամփոփ դադարար մը տալ Ռուսիոյ, Աւստրիոյ և Գերմանիոյ թէ՛ ներքին և թէ՛ արտաքին աշխարհավարութեան ինչ ինչ յատկանիշերուն եւ որոշ ձգտումներուն վրայ։ Ուղեցինք ցուցնել, օրինակի համար, թէ իւրաքանչիւրն այս երեք կայսրութեանց ինչ ուղղութեամբ կը վարէ իւր արտաքին աշխարհավարութիւն, և ինչ տեսութեամբ կը վարուի իւր հպատակաց հետ։ Ուստի, ցորչափ մեր խօսք Ռուսիոյ, Աւստրիոյ և Գերմանիոյ վրայ էր, մեր քննութեան առարկայ եղան առաւելագոյն կառավարութեանց, քան թէ Ժողովրդոց ձգտումները։ Բայց երբ կուգանք քննել Արեւմտեան երկու մեծ Տէրութեանց, Ֆրանսայի և Անգլիոյ, ձգտումները, պարտինք յեղաշրջել մեր քննութեան կարգն, և կառավարութեանց ձգտումները քննելն աւելի Ժողովրդոց ձգտումներն իմանալու աշխատիլ, այն բացառապէս պատճառաւ թէ, որպէս Եւրոպիոյ երեք կայսրութեանց մէջ կառավարութիւններն են որ կը վարեն Ժողովուրդներն, Արեւմտեան երկու Տէրութեանց մէջ Ժողովուրդներն են որ կը վարեն կառավարութիւնները։ Թէեւ Անգլիա Միապետութիւն մ'է և Ֆրանսա՝ Հանրապետութիւն, բայց այս երկիրներու մէջ հաւասարապէս դիտելի

իրողութիւն մ'է Ժողովրդեան վեհապետութիւնն։ Այսպիսի երկիրներու համար երկրորդական կարեւորութիւն մը միայն կրնայ ունենալ օրուան կառավարութեան մասնաւոր ուղղութիւնն իմանալու ժամանական լինել, երբ պետական ամեն տեւական ուղղութեան աղբիւրը Ժողովուրդն ինքն է։

Այսօր պիտի ջանանք, — այն հակիրճ ոճով որ անհրաժեշտ է լրագրական յօդուածի մը անձուկ սահմաններէն դուրս չելնելու համար, — քննել Ֆրանսական ազգին արտաքին աշխարհավարութեան այժմեան ընթացքն, և ներքին աշխարհավարութեան նորագոյն ձգտումները։

Երկրորդ կայսրութեան անկումէն յետոյ Ֆրանսա ժամանակ մը մնաց առանց արտաքին աշխարհավարութեան։ Ժողովրդեան և կառավարութեան մեծագոյն հոգածութեան առարկայ էր երկրին ներքին ոյժերուն վերակազմութիւնն։ Այս ներքին աշխատութիւն և քաղաքական ու գիւնդարական տեսութեամբք երկրին ապաքէն տկար վիճակն անհնար կը դործէին որ և իցէ միջամտութիւն արտաքին խնդիրներու, կամ հեռաւոր ձեռնարկներու։ Ֆրանսայի համար լաւագոյն ընթացքն էր այս, որ շատ արդիւնաւոր եղաւ, ըստ որում երկիրը ժամանակ ունեցաւ ամփոփուելու, վնասները դարմանելու, և Եւրոպիոյ հզօրագոյն ազգաց մէջ նորէն առաջնակարգ տեղ մը գրաւելու։ Երբ Մարէշալ Մադ-Մահոն ինկաւ Նախագահութենէ, ներքին վերակազմութեան աշխատութիւնը կատարելագոյն արդիւնք տուած էին։ Աշխարհ համբոյն կը դիմէր Բարիզի Տիեզերական վերջին Արեւստահանդէսին՝ Ֆրանսայի վերածնու-

(1) Տէ'ս «Մասիս» նոյեմբեր 24ի։

թիւնն ողջունելու : Երբ Պ. Ժիւլ Կրէյլի Նախագահական դահլը բաղմեցաւ, Ֆրանսական ազգն այլ եւս կարող էր ձայն ունենալ Եւրոպիոյ խորհրդոց մէջ, և իրեն յատուկ արտաքին աշխարհավարութիւն մը մշակել : Արդէն իսկ կը դանդաւորէր թէ Պ. Վատինկդոն Պերլինի Վեհաժողովոյն մէջ պէտք եղածէն աւելի չէզոք և անշահախնդիր դեր մը բռնած էր, և սուսաւ ազդեցիկ աշխարհավարութեան մը պէտքը կը հաշակուէր : Կառավարութիւնը շուտով իրաւունք տուաւ այս ժողովրդային պահանջման : Թունուցի դրաման ձեռնարկուեցաւ մի կողմէ : Միւս կողմէ, Պերլինի Դաշնագրոյն գործադրման առթիւ յարուցեալ եւրոպական խնդիրներու մէջ Ֆրանսա իրեն պատկանող դերը կատարեց : 1870-71ի տըլուր յիշատակներն այլ եւս չէին անդամալուծեր Ֆրանսան : Սա յիրաւի ո՛չ եւս էր տէրն Եւրոպիոյ ճակատագրոյն, այդ նախանձելի դիրք անցած լինելով իւր յաջող հակառակորդին : Բայց Ֆրանսա տուած էր հրաշալի ապացոյցներ իւր կենդանութեան : Ֆրանսական ազգը գերմանականէն աւելի հարուստ էր, յետ այնպիսի կորուստներու որք անդարմանելի կարծուած էին : Ֆրանսական բանակն ալ պօրաց թուոյն, զինուոց և ռազմավարաց կողմէ վար չէր մնար գերմանականէն, որուն շարունակ կ'աշխատէր հաւասարիլ ուրիշ կէտերու մէջ եւս : Տնտեսական զօրութիւն և զինուորական զօրութիւն միացեալ կ'արտադրեն քաղաքական զօրութիւն, — որուն ապագէն ճշմարիտ հիմերն են, — երբ քիչ մը ուշիմ քաղաքագէտներ կը վարեն ազգն : և այսպիսի քաղաքագէտներ չպակսեցան Ֆրանսացուց :

Այս քաղաքական վերածնութեան օգուտները Ֆրանսա լիովին վայելեց վերջին տարիներուն մէջ : Թունուցի դրաման յաջորդեց Եգիպտական խնդրը : Պ. Կամիլ զգայի օրով քիչ մնաց որ Ֆրանսա, Անգլիոյ նման, զինու զօրութեամբ միջամտէր յեգիպտոս : Թէեւ ազգն, արկածալից ձեռնարկներէ զգուշանալու և երկրին հազիւ վերականգնեալ ոյժերը չսփռելու մտահոգութիւնով, բնազդմամբ ետ կեցաւ զինուորական միջամտութենէ մը, — երկչոտութիւն, զոր այժմ բաղում ֆրանսացի քաղաքագէտներ կ'ողբան, — բայց տակաւին, չնորհիւ

իւր քաղաքական կացութեան բարեօրման, Ֆրանսա՝ Եգիպտական խնդրոյն մէջ իսկ՝ Անգլիայէն յետոյ առաջնակարգ դերը կատարող Տէրութիւնն է յԵւրոպա :

Բայց այս պահուս Ֆրանսա աւելի բան մը կ'ընէ : Կաշխատի իրեն համար Հնդկաստան մը կազմել ծայրագոյն Արեւելից մէջ : Աննտի և Թոնքինի ընդարձակ երկիրները դրաւեցան, և կ'երեւի թէ Ֆրանսական զօրքերն հոն կանգ չպիտի առնուն դեռ : Յոռետեաներ գուշակեցին թէ ինչ որ Մեքսիկայի արշաւանքն եղած էր Երկրորդ Կայսրութեան համար, Թոնքինեան արշաւանքը նոյն պիտի լինէր Երրորդ Հանրապետութեան համար : Այդ գուշակութիւն ցարդ չըստուգուեցաւ, և դէպքերուն ընթացքը դիտելով, հաւանական չէ որ ստուգուի : Ֆրանսա ռոնձդութիւն կ'ընէ նաեւ Մատակաւարի մէջ. և այսպէս կը ստանայ իւր ապագայ սերնդոց նիւթական աճման ու զարգացման համար նոր դաշտեր : Պարագային յարմար մարդիկ ալ չեն պակսիր : Եթէ Ռուսական մը զԹունուց կուտայ Ֆրանսայի, Տը Պրաղա մը հարուային Ափրիկէի լաւագոյն մէկ երկրին (Բոնկոյի) վրայ կը տնկէ ազգային դրօշն : Այսչափ ծաւալում մը աշխարհի ամեն մասանց մէջ՝ բաւական է հաստատելու թէ Ֆրանսայի արտաքին աշխարհավարութիւնն այսօր նուազ գործօն չէ քան Նաբօլէոն Երրորդի օրով, երբ եւրոպական Տէրութիւնք կը սկսէին տրտնջալ ընդհանուր խաղաղութեան միջոցին Ֆրանսայի կատարած աշխարհակալութեանց համար :

Ընդարձակել և ապահովել Ֆրանսական դադլականութիւններն, Եւրոպիոյ խորհրդոց մէջ արժանաւայել դիրքը բռնել, և՛ Ֆրանսայի քաղաքական օգտին համար՝ բարեկամ մնալ Անգլիոյ հետ և լաւ յարաբերութիւններ տածել Գերմանիոյ հետ, — այս է արտաքին աշխարհավարութեան այժմեան յատակագիծը Պ. Ժիւլ Ֆէրրիի, որ վերջին ժամանակներս Ֆրանսայի գործոց գլուխը կոչուած Նախարարապետաց մէջ ամենէն ճարտար և ամենէն բախտաւոր կը հանդիսանայ, և ամենէն հաւելի վստահութիւն կը գտնէ ազգէն :

* * *

Բայց Ֆրանսա խորին ուսումնասիրութեան, հետաքրքրական զխտողութեանց և

հրահանգիչ դասերու նիւթ կը մատակարարէ մանաւանդ իւր ներքին աշխարհավարութեամբ։ Ի՛նչ սխալներ ալ գործեն օրուան նախարարութիւնը, Հանրապետութիւնն ամբողջութեամբ կը զօրանայ և խորադոյն արմատներ կը ձգէ։ Բայց Հանրապետութիւնը կառավարական ձեւ մ'է միայն, և կառավարական նմանօրինակ ձեւերու ներքեւ մտային յոյժ տարբեր վիճակներ կրնան հովանաւորուիլ։ Ֆրանսա Հանրապետութեամբ կը կառավարուի այսօր, ինչպէս տասն և չորս տարի առաջ։ Բայց տասն և չորս տարիէ հետէ գաղափարաց զօրաւոր յեղաշրջում մը շարունակ դէպ յԱրմատականութիւն և դէպ յԵրկրակաշարութիւն կը մղէ Ֆրանսան։ Եւրոպիոյ ամենէն կաթոլիկ ազգին մէջ կաթոլիկ կրօն և հռոմէական կղերը հետըզհետէ կը տկարանան զգալապէս։ Կղերն ազգին հետ միացնող կապերը կը խզուին միտմի։ Նոր սերնդեան աւանդուած դաստիարակութեան մէջէն կրօնային մասը կը վերցուի։ Կամ գէթ Պետութիւնն ինք, հրապարակելով ժողովրդեան ստուար մեծամասնութեան կամաց, զայն կը վերցնէ իւր ծախիւք հոգացած դպրոցներու մէջէն, և կը յանձնէ բարեպաշտ ծնողներու՝ մասնաւոր կրօնադէտ ուսուցիչներու ձեռամբ և իրենց փափաքած ձեւով հոգեւոր դաստիարակութիւն աւանդել իրենց զաւակաց։ այն ամեն հաստատութիւնք ուր կղերին ներկայութիւնը, մասնակցութիւնը կամ լոկ ազդեցութիւնն անհրաժեշտ կը համարուէր յառաջագոյն, աշխարհականացման աճեցուն շարժումը մը շարունակ ետ կ'առնուին եկեղեցականաց ձեռքէն, ինչպէս դպրոցներ, հիւանդանոցներ, զօրանոցներ, անկելանոցներ և ասպաինատուններ։ Աշխարհականացում ամեն բանի և ամենուրեք։ Բայց ժողովրդեան այն մասեր և Պետութեան այն հաստատութիւններ որք կը դադրին կաթոլիկ լինելէ, ուրիշ ծանուցեալ կրօնի մը չեն յարիր։ Ըսենք՝ բուն բառը, դարհուրելի բառն, անհաւատութիւնն է որ օր ըստ օրէ կը տարածի և կը զօրանայ Ֆրանսայի մէջ։ Հռոմայ Պապերէն ամեն երկիրներէ, ամեն ազգերէ աւելի սիրուած Ֆրանսային մէջ։ Անհաւատութեան հեղեղը կ'առնու կը բռն առջեւէն ամեն հաստատութիւն, ամեն գաղափար, ամեն արտադրութիւն մտաց կա

ձեռաց։ Ոմանք կը շատանան ազատամիտ գաղափարով միայն, և եթէ ո՛չ եւս կաթոլիկ են, տակաւին կը հաւատան բանի մը։ Այսպէս են ընդհանրապէս վերին դասերը, մեծանուն գրագէտներն, երեւելի քաղաքագէտներն և հարուստներն։ Այլ աւելի ստորին դասերու վրայ մերկապարանոց կը յայտնուի անհաւատութիւնն։ և աստ Ընկերակարութեան դիմակը կ'առնու, այլուր՝ Անիշխանութեան։ Արու և էգ հաշուելով, անշուշտ Կաթոլիկները տակաւին ստուար մեծամասնութիւն մ'են։ զի Ֆրանսացւոց գեղեցիկ սեռն, որ անշուշտ Փիղիքապէս միայն «տկար» չէ, վարակեալ չի թուիր տակաւին, թէեւ երեւելի անհաւատ եւ ընկերակարական հերոսահիմներ ալ չեն պակսիր Տիկին Լուիզ Միշելի և Օրիորդ Իւպերիին Տիւքերի հայրենեաց մէջ։ Կրօնին և կղերին հաւատարիմ կը մնայ Ֆրանսացւոց «լուսադոյն կէս» էն՝ շատ նաեւ գիւղացւոց մեծամասնութիւնն, որ տղէտ գոլով, փամանակին գաղափարական յեղաշրջումներէն շատ բան չիմանար, և եթէ հանրապետական է, նիւթական չահու տեսութեամբն է, ինչպէս ուրիշ աւթիւ Զանացիք բացառելէ։ Բայց գիւղացւոց մէկ մեծ մասը, թէ և հաւատացեալ, առաջուան չափ հաշտ աչօք չի նայիր կղերային իշխանութեան, որուն տկարացման միտող խորհրդարանական և կառավարական տնօրինութիւնները դահութեամբ կը տեսնէ, ապա թէ ոչ՝ հանրապետական նախարարք չպիտի համարձակէին գիւղացւոց մեծամասնութեան պարսաւած միջոցներն ի գործ դնել ընդդէմ կղերին։ Իսկ քաղաքաց մէջ, մեծ թէ փոքր, տարբեր է իրաց վիճակն։ Հոն գերիշխան կը տիրէ Ազատամտութիւնը, կամ, բուն իսկ Ֆրանսական բացառութեամբ, «Ազատ Միտքն», իւր զանազան գոյներով ու երանգներով, Պ. Ժիւլ Սիմոնի չափաւոր ազատամտութենէն և իմաստասէրի ու բարոյագէտի Բուհան կրօնէն սկսեալ մինչեւ Պ. Հանրի Ռոշֆուի ամենուրայ անհաւատութիւնն և քանդիչ անիշխանականութիւնը։

* *

Ամեն երկրի կղերին համար ո՛րպիսի թանկազին դաս մը կ'ընծայէ Ֆրանսայի օրինակը։ Անտարակոյս Ֆրանսական կղերին նիւթական ու բարոյական բռնակալութիւն

նըն ու աններողութիւնն (այսինքն՝ Էնդի-
շան) յոյժ նպատեցին հակակրեային
գաղափարաց ծաւալման, և այսօր իսկ ան-
կրօն հրատարակիչներ իրենց գաղափար-
ներն ընդունելի ցոյց տալու համար հասա-
րակութեան հաւատացեալ մասին, բնա-
զանցական փաստերէն աւելի պատմական
փաստերու կը դիմեն, ստացուցանելու հա-
մար թէ, հռոմէական կղերն եթէ ազատ
թողուէր, ո՛րպիսի մտային ստրկութեան մէջ
պիտի պահէր զաղղն և ո՛րչափ խափան պիտի
լինէր ժողովրդեան նիւթական ու բարոյական
յառաջդիմութեան: Իրողութիւն մ'է թէ,
կաթոլիկ կղերն ի Ֆրանսա՝ միշտ նեցուկ ե-
ղած է անժողովրդային բռնակալ իշխա-
նութեանց, և ազգին բնական և օրինա-
ւոր ազատութիւններն ոտնակոխ ընել ու-
ղղներուն կողմը դանուած է: Իւր աւան-
դած դաստիարակութեան միասնական ու
բնազանցական սահմանափակ բնութիւնն
արգելք եղած է ընդ երկար՝ դիտականիրթու-
թեան մը տարածման: Հաւատոյ դատը չփո-
թելով քաղաքային և ընկերային դատերուն
հետ, քաղաքային և ընկերային պէտքերու
և զեղծումներու վրայ ազատ մտածութիւնը
դատապարտած է իբրեւ հերետիկոսութիւն,
սրով իրեն դէմ դարձուցած է ամեն անոնք
որ ազատ մտածութիւնը կը նկատեն մարդ-
կութեան մեծագոյն առանձնաշնորհն: Սրբ
Ֆրանսայի ժողովուրդը կը մարտնչէր՝ քաղա-
քական կռուանին վրայ՝ իւր մէջ իսկ ծա-
գած բռնակալութեան մը դէմ, կղերին կէտ
նպատակին էր՝ մտային և բարոյական կռու-
ուանին վրայ՝ զայն հսկատակ պահել օտար
բռնակալութեան մը, որ՝ Պապական իշխա-
նութեան զխմակին ներքեւ՝ ամենէն անհե-
թեթ վարդապետութեամբ կը կաշկանդէր
մտաց և սրտի ամեն բանաւոր արապայտու-
թիւն: Այս էր աւաթիկ ազգէն անջատ դաս մը
կազմող խաւարանիտ կղերի մը նկարագիրն,
որ, ինքզինք կատարելապէս անժողովրդա-
կան ընելու համար, նիւթական բռնութիւնն
աւելցուցած էր մտաւորին վրայ, և իբրեւ
վեղարաւոր աղնուապետութիւն մը, իւր
պահանջած շարժուն ու անշարժ հասցիներ-
ով ու տուրքերով անտանելի բեռ մը դար-
ձած էր ազգին նիւթական կարողութեանց
վրայ:

«Աղերն աններողամիտ միայն կրնայ լի-

նել», կ'ըսէ անգլիացի իմաստասէր պատմա-
բանն Թոմմաս Պըքլ, իբրեւ եզրակացու-
թիւն մանրակրկիտ քննութեանց: Բայց իւր
ազգին մէջ իսկ, աւելի դործնական մտօք
օժտեալ կղեր մը, ի դէպ ժամու ըմբռնե-
լով նոր ժամանակաց պահանջներն, և ժո-
ղովրդեան մտային ու քաղաքական ազատա-
գրութեան արգելք լինելէ դադրելով, ո՛չ
միայն Ֆրանսական կղերէն շատ աւելի զօ-
րաւոր ու նախանձելի կացութիւն մը կրցած
է պահպանել, այլ նաեւ ազգն ազատած է
այն ծայրայեղութիւններէ, ուր արդ ինկած
կը տեսնենք Ֆրանսան, հակակրեական մար-
տին մէջ: Անգլիական ազգին այս մասնա-
ւորութեան վրայ յատկապէս պիտի խօսուի
յոջորդ յօդուածի մը մէջ, որուն՝ իբրեւ
շարունակութիւն ներկայ Տեսութեան՝ նիւթ-
պիտի լինի Մեծին Բրիտանիոյ արտաքին և
ներքին աշխարհավարութեան քննութիւնը:
Ճատ վճատեցուցիչ վարդապետութիւն մ'է
պնդել թէ կղերն աններողամիտ միայն կըր-
նայ լինել: Քրիստոնէական կրօնի Հիմնա-
դիրն ըսած է. «Քննեցէ՛ք զիրքերն», և իւր
քարոզած կենսական վարդապետութեանց
քննութեան ազատամիտ ջատագովն եղած է:
Նոյն ազատ քննութեամբ դրաղեալ կը գըտ-
նենք նաեւ իւր աշակերտներ և Նիկեացոյ
մեծանուն Հայրերը: Պըքլի նկարագրած
կղերին աններողութիւնն ո՛չ այնչափ կրօ-
նային վարդապետութեանց բնութենէն,
որչափ իրեն յատուկ շահեր ունեցող կղե-
րական դասակարգի մը անձուկ տեսութե-
նէն ծագում առած պէտք է լինի: Չայս
եւս ցուցնելու համար, կարելի է բազդա-
տել զանազան ազգաց կղերներն, և աննե-
րողութեան մասին զգալի տարբերութիւն-
ներ դնել անոնց մէջ, մինչ եթէ վարդա-
պետութեանց բնութենէն իսկ ծագում առ-
նուր աններողութիւնն, հաւասարապէս ան-
ներողամիտ պարտէին լինիլ ամեն ազգաց
կղերները:

Արօնի շահը կը պահանջէ որ իւր պաշ-
տօնեայք ուսեալ անձեր լինին, և ինչ որ
միայն իրենց սղիտութեան հետեւանքն է,
զայն չվերադրեն իրենց քարողած պատուա-
կան վարդապետութեանց բնութեան: Հիմ-
նական վարդապետութիւններ նոյն մնալով
հանդերձ, կանոններ, ձեւեր, բացատրու-
թեան կերպեր կրնան փոփոխել ժամանա-

կին աճեցուն պահանջմանց յարմարելու հա-
մար : Այս համալմամբ է, օրինակի համար ,
որ ուրիշ առթիւ մը , այս տողերու հեղի-
նակը ջանացած է ապացուցանել թէ Հա-
յերն ալ կրնան ունենալ Ամուսնալուծու-
թեան Օրէնք մը : Հայ կղերին վիճակն ու
ընթացքն ընդհանրապէս իրաւունք չի տար
Պաքի համալման : Բայց վերջապէս , « Եւ է
կէր , ելէ ասին Բարադոմ մերժէ զէ նորո-
ւելն » , օր մը կը պարտաւորէ հանդուրժել նորո-
ւելն երբ այդ նորո-ւելն աղբիւր դարձէ Բար-
ադոմ մը լինելէ : Ինչպիսի նորութիւններ
ու կը պարտաւորի այսօր հանդուրժել կա-
թոլիկ կղերն , որք ստուգիւ բարեօրոմ մը
չեն իրաց նախկին վիճակին վիճակին վրայ ,
այլ մի նոր ձեւն են միայն հին զեղծումնե-
րու : Առ ինչ կը ծառայէ բառնալ կղերին
աններողութիւնն , երբ անոր տեղ կ'անցնի
անկրօններու աններողութիւն մը , որք ժո-
ղովրդեան հաւատացեալ մասին խիղճը կը
բռնաբարեն : Առ ինչ կը ծառայէ բառնալ
ձերէն եկող բռնապետութիւն մը , երբ անոր
տեղ կը դրուի լաւէն եկող բռնապետութիւն
մը : Բայց ո՞վ կրնայ ժխտել թէ , եթէ պա-
պական կղերը ժամանակին ներողամիտ ա-
ջօք նայէր փոքրիկ նորութիւններու որք
էական բարեօրումներ էին , այսօր չէր պար-
տաւորուեր զլուս ծռել աշխարհի նորու-
թիւններու որք բարեօրումներ չեն ստու-
գիւ : — Ի միտ առնունք ուրեմն զայս միակ
դաս , և յայնժամ բան մը սովորած կը լի-
նինք Ֆրանսայի մտային և ընկերային այժ-
մեան կարի հրահանգիչ կացութիւնէն :

Բ. ԳԵՂԵՍՆ

Կ ԵՆ Մ Ա Ք Բ Մ Կ ԱՆ

ՖԲԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՔ ՆՈՐ ԱԿԱԴԵՄԱԿԱՆՔ

ՎԻՔԻՔԵՆՍԻՒՆԻ-ԺՈՁԷՑ ՊԵՐՔՐԱՆ

-ԼԻԻՏՈՎԻՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Դեկտեմբեր 4-ի, հինգշաբթի օրը, Փարիզի Ազգային Երեք Նոր անդամներ ընտրեց, իւր հանգուցեալ երեք անդամոց՝ Մինիէ պատմաբանին, Ժան Պաթիլլօ Տիւմա գիտնականին և Կոմս Կոստէ Դրագէտին տեղ :

Քասնեւեոթն ակադեմիականք միայն ներկայ էին այդ նստին . Վերթոր Հիւկոյ, Նիւզար, Լըկուվէ, Էմիլ Օժիէ, Տը Պրոյլի դուքսը, Քամիլ Տուսէ, Քիւվիյէ Ֆէյդրի, Քասվիյէ Մարմիէ, Օմալի դուքսը, Քամիլ Բուսէ, Ալֆրէտ Մէզիէր, Ալէքսանդր Տիւմա, Քաւրոյ, Ճոն Լըմուան, Ժիւլ Սիմոն, Կասթոն Պուսսիէ, Վերթորիէն Սարաու, Էրնէսթ Բընան, Հ. Թէն, Մաքսիմ տիւ Քան, Էտմոն Բուս, Սիւլլի Բրիւտոմ, Գասթէոր, Վ. Շէրպիւլիէ, Բէրրոյի Եպիսկոպոսն, Էտուար Բայրոնն և Շարլը Մադատ :

Բացակայ անդամներն էին՝ Էմիլ Օլիվիէ, որ ի Ս. Թրորբեզ կը գտնուէր այս պահուսն և Օգլթալ Ֆէոյետ՝ որ ի Զուլցերիա, Տը Ֆալլու, Վիէլ Բասթէլ, Տը Նոպլ, Օտիֆրէ Բառքիյէ և Էոթէն Լապիլլէ։ Այս եօթն անդամոց վրայ յաւելլով վերջին երեք նոր ընտրեալներն՝ Էտմիստ Ապու, Ֆրանսուա Բորգէ և Ֆերդինանտ տը Լէսէթս, որք հանդիսաւոր նստի մը մէջ ընդունուելէ՝ յետոյ միայն իրաւունք ունին քուէարկելու, կ'ունենանք Ակադեմիոյ կենդանի անդամոց թիւն՝ այն է երեսուն և եօթն։

Ատեանը բացուեցաւ միջօրէէն մէկ ժամ
յետոյ, ընդ նախագահուիթեամբ Պ. Կաս-
թոն Պուասիէի :

Առաջին քուէարկութիւնը կատարուե-
լով, 27 քուէարկուածք մէջէն Վիքթոր Տիւ-

րիւի ստացաւ 24 քուէ և ընտրուեցաւ մէկ քուէ ստացաւ Պ. Թէոտոր տը Պանվիլ, և այս՝ Վիքթոր Հիւկոյի սուած քուէն էր։ Երկու ալ սպիտակ քուէ էրան։

Երկրորդ քուէարկութեան մէջ, Պ. Ժոզէֆ Պէրթրան ընտրուեցաւ 26 քուէով մէկ քուէ ստացաւ Պ. Լըբոնի տը Լիլ, և այս քուէն՝ Վիքթոր Հիւկոյինն էր։

Այսպէս առաջին երկու ընտրութիւնը կատարեցան մէկ կարգ քուէարկութեամբ, վասն զի մէկ մէկ ընտրելի կար միայն այդ աթոռներու համար։ Իսկ երրորդ ընտրութիւնը փոքր ինչ գոտարկութեան հանդպեցաւ։ Լիւտովիւ Հալէվի և Էոթէն Մանիւէլ երկու ընտրելիներն էին տ'Օսոնվիլ կոմսին մահուամբ բաց մնացած աթոռին համար և ջերմ մրցում տեղի ունեցաւ։ Երկուքն ալ Ակադեմիոյ մէջ անձնուէր բարեկամներ ունէին, որք մինչեւ վերջին վայրկեանը ջերմապէս աշխատեցան իրենց ընտրելեաց յաջողութեան համար։ Գլխաւորաբար Ժիւլ Սիմոն և Էրնէսթ Լըկուվէ մեծ ջանքեր ըրին Էոթէն Մանիւէլի յաղթանակն յաջողցնելու համար։ Մինչեւ իսկ ըսողներ եղան թէ այսքան մեծ թուով ակադեմականաց բացակայութեան պատճառն անձանց չէր անոնց, ըստ որում խիստ քիչ տեսնուած էր որ այսքան սակաւաթիւ անդամներով ընտրութիւն մը կատարուէր Ակադեմիոյ մէջ։

ՎԻՔՏՈՐ ՏԻՒՐԻԻ

Այն ժամանակէն երբ Վիքթոր Տիւրիւի պատմութեան պարզ ուսուցիչ մ'էր Հանրի Գ. Լիսէին մէջ, իւր աշակերտներ զինքը կը նկատէին շատ ազատական, մինչեւ իսկ հանրապետական։ Հռոմայեցւոյ պատմութեան վրայ իւր ձեռնարկած աշխատութեանց մասին քիչ շատ տեղեկութիւններ տարածուած էին։ Իւր գաղափարները չէին ընդհանուրին ունեցած գաղափարներն, և թէպէտ շատ կ'ուսումնասիրէր և կը քաղէր գերմանացի գիտնոց գործերէն, այլ սակայն իւր գրելու եղանակը բոլորովին անկախ էր։ Այլոց գիտութիւններէն օգուտ կը քաղէր, յաւելլով նաեւ զիւրն, առանց բան մ'որինակելու։

Նաբոլէոն Գ. այն ատեններն զբաղած

էր իւր «Լիւսար» Լիւսիւր» գրելու։ Կայսրը կը փափաքէր իւր շուրջն հաւաքել բոլոր գիտնականներն, անոնց կարծիքն հարցնել և ձեռնհաս անձանց խորհուրդները լսել։ Տիւրիւի խօսքն ըրած էին իրեն, զանիկայ ալ կանչել տուաւ, թէպէտ ուրիշներէն չատ յետոյ։ Պ. Տիւրիւի բաւական ճարտիկ էր առիթէն օգուտ քաղելու համար, ուստի և խօսքը դարձուց այնպիսի նիւթի մը վրայ, որոյ մասին իւր գլուխը լի էր նորատեսակ գաղափարներով։ Խնդիրը Համալսարանի վարչութեան վրայ էր։ Կայսրն որ ինքն ալ Տիւրիւի չափ ազատամիտ էր, հաճոյանօք ունէին դրաւ նմա։

Ըստ Պ. Տիւրիւի, Համալսարանն՝ այդ մեծ մեքենայն լաւ չէր գործածուեր։ Ժողովրդական կրթութիւնը պէտք էր որ լինէր մեծ կէտ նպատակին։ Փոխանակ զայն հասոյթի աղբիւր մը նկատելու, ընդհակառակն հարկ էր դրամ նուիրել անոր, և բազում դրամ։ Հարկ էր հոսկ ուրեմն յոյժ կարեւորութիւն ընծայել այն մեծ բանակին՝ որ կը բաղկանար վաթսուհի հազար վարժապետներէ։ Այդ բանակը լքեալ էր թըշուառութեան, և ենթարկեալ դաւառներու և գիւղերու ամեն կարգի ազդեցութեանց, մինչ կարող էր դառնալ զօրաւոր նիւթ մը, որուն շնորհիւ կարելի լինէր աւելի արագ մըլում տալ յառաջդիմութեան և մեծ ներգործութիւն ունենալ մտքերու վրայ։

Նաբոլէոն Գ. մտիկ ըրաւ, սքանչացաւ, և ոչինչ ըսաւ։ Բայց քիչ ժամանակ յետոյ, երբ հարկ եղաւ Պ. Բուլանի յաջորդ մը գլուխել իբր կրթական նախարար, Պ. Տիւրիւի՝ որ այն միջոցին իբր այցելու քննիչ կը շրջէր, լուր տուաւ թէ ինքն եղած էր այդ յաջորդը։

Գաւառական դպրոցի մը մէջ պատմութեան դասախօսութեան մը ներկայ կը գտնուէր, երբ հեռագիր մը բերին իրեն։ Խսկոյն գոյնը նետեց, երկնչելով որ այդ հեռագիր կը գուժէր մահն իւր ընտանեաց անդամներէն միոյն որ ծանրապէս հիւանդ էր։ Պ. Տիւրիւի խնդրեց դպրոցի վերակացուէն որ հաճի բանալ հեռագիրն, և սա, այն ինչ կարդաց հեռագիրն, յայտնեց թէ վրդովուելու տեղի չկայ «Բան մը չէ, ըսաւ, կրթական նախարար եղած էք»։

Նախարար. ուրեմն կարող պիտի լինէր

այնուհետեւ իրականացնել իւր բոլոր դա-
ղափարները: Բայց, ձախտող դիպուած,
իւր տրամադրութեան ներքեւ ստակ չգրին,
սակայն այսպիսի երկրորդական պարագայ
մը կարող չէր Պ. Տիւրիւի նման անձի մը
խորհրդոցը խոչնդոտ լինիլ: Իւր բոլոր զօ-
րութեամբ նետուեցաւ կրկէսին մէջ, ետե-
ւէն ձգելով կրթական նախարարութեան
բոլոր պաշտօնեայներն, որք շուտով չնչա-
սպառ մնացին: Շրջաբերականք, գրական
գեղեցիկ ոճով մը գրուած, միմեանց կը յա-
ջորդէին, այն աստիճան դահալէժ արա-
գութեամբ որ հարկ եղաւ պաշտօնական
թերթ մը հրատարակել զանոնք հաւաքելու
համար: Զոր ինչ կարելի էր ընել առանց
գրամի, այդ ամենուն ձեռնարկեց յախուռն
եռանդեամբ: Պ. Տիւրիւի ընտելացած լինելով
մարմնոյ ամեն մարզանաց, քաջառոյդ, ա-
րագաշարժ, և ամուր կազմուածքով, անձ-
նապէս ոչինչ հոգնութիւն չէր զգար, և ա-
ռաւել եւս չէր զգար այլոց հոգնութիւն-
ներն: Ուստի և իւր Նիւանի պաշտօնատար-
ներէն չատեր հաշմանդամ կէս ճանքան մնա-
ցին և հարկադրեցան հրաժարիլ: Այս ա-
մենուն վրէժը կը լուծէին, ըսելով թէ նոր
նախարարն աւելի աղմուկ կը յարուցանէր
քան գործ կը տեսնէր:

Բոլոր այս երկրորդական քննադատու-
թիւնք կը կորսուին ժամանակաց խաւարին
մէջ և կենդանի կը մնան միայն մեծ գծերն
այն յանհուն նորօրինակ վարչութեան որ
տեսնց վեց տարի: Առաջինն է այն չափա-
զանց մըլմը զոր տուաւ նախնական կըր-
թութեան՝ որ Տիւրիւի ժամանակէն սկսեալ,
դարուս քաղաքական տմենամեծ մտահոգ ու-
թիւններէն մին եղաւ: Դիտելու արժանի է
որ նա ինքն հարթեց հանրապետութեան
չաւիղն, և հանրապետականք այնքան լաւ
գիտցան զայս, որ եթէ կարելի լինէր, յօ-
ժարակամ պիտի դնէին զինքն Համալսարանի
գլուխը: Նոքա չեն մոռնար թէ Վիքթոր
Տիւրիւի հակառակեցաւ կղերին ազդեցու-
թեան, և այս իսկ եղաւ պատճառ իւր
հրաժարման:

Իւր գործերէն բաւական է յառաջ բե-
րել ժողովրդական դաստիարակութեանց և չա-
փահասից դպրոցներու կազմակերպութիւնն,
ընդհանուր Լիսէներու և վարժարաններու
մէջ արուեստավարժութեան ուսման ներ-

մուծումն, որ յառաջագոյն Միւլհուզի,
Լիոնի և Բուէնի նման վաճառաւոր քաղա-
քաց մէջ միայն կ'աւանդուէր, և որոյ հա-
մար պարտաւորիչ ըրաւ, դուցէ ո'չ օգտա-
կար կերպիւ, կրթական ընդհանուր և միա-
կերպ յայտագիր մը:

Գալով իւր անձին, խիստ համակրելի է:
Յստակ, ուղիղ և խորազննին նայուածք
մ'ունի. դէմքը կը նմանի հռովմական հին
միտալներու վրայ նկարուած պատկերներու.
և երբ կը տեսնեն զինքը, բարձրահասակ և
կորովի կազմով, որ կ'ընթանայ ամրակոխ
քայլերով զոր ժամանակը չէ կրցած համրա-
ցունել, կարծես փափագ կ'զգայ մարդս որ
Տիւրիւի զգենու նախնեաց պատմութեան,
ընծայելու համար մեղ կենդանի պատկեր
մը կեսարու կամ Օգոստոսի ժամանակակից
փիլիսոփայի մը կամ հիւպատոսի մը:

Իբր մարդ՝ պարզ է նա, ո'չ թէ մտօք,
այլ խորհրդով ու ձեւերով: Իւր ուսումնասի-
րութեամբ, հին դիւցազանց յիշատակնե-
րուն հետ կենակցելով, անոնց առաքինու-
թիւններն իւրացուցած է: Փարիզու պա-
շարման ժամանակ ուղեց բանակին ծառա-
յել և մտաւ աղդային պահապան զօրաց
գունդը:

Տիւրիւի երկու գործերը պիտի մնան
կենդանի, իւր Հասարակաց պարտաւորեան և
իւր Նախարարութեան:

ԺԱՁԷՑ ՊԵՐԹՐԱՆ

Ֆիլիքական տեսակէտով, Ակադեմիոյ բո-
լոր անդամոց մէջ ամենէն նուազ յանկուցիչ
դէմքն ունի շատ հաւանօրէն Ժողէֆ Պէրթ-
րան: Ոչինչ իւր կերպարանքին մէջ ի նպաստ
իրեն կը խօսի: Յոյր և կարճ, կուտ, երես-
ները դուրս տուած, խոշոր պէխերով, հաստ
յոնքերով աչքերը տարօրինակ կենդանութիւն
մը կը փայլեցնեն և սէտք է հետը խօսակ-
ցիլ ճանչնալու համար թէ այս կարծր պա-
տենին մէջ պատուական մարդ մը և մեծա-
յարգ գիտնական մը կը պարունակուի: Գը-
րեթէ վաթսուն երկու տարեկան է:

Իւր դէմքին վրայ նախ և առաջ աչքի կը
զարնէ քիթը որ մեծ մասամբ խորտակուած
է, և այս հետեւանքը մնացած է 1842 ին
Վէրսայի երկաթուղւոյ զարհուրելի պատա-

հարէն, յորում չատեր իրենց կեանքը կորուսին և ժողէֆ Պէրթրան դէմքին վրայ ծանր վէրք մ'առաւ որոյ հետքն անջնջելի կը մնայ յաւէտ :

Այս անձնաւորութեան համար կրնայ ըսուիլ թէ Ֆրանսայի հինգ Ակադեմիաներուն սեփեցը վրայ ծնած է : Իւր հայրն հռչակաւոր եղած է « Երկրաբնութիւն » անուն գործոյն հետեանց շրջա շառնի » անուն գործոյն հետեանց շրջա շառնի, և գիտութեանց Ակադեմիոյ անդամ Պ. Տիւհամէլ իւր մօրեղբայրն էր :

Տասն և մէկ տարեկան եղած ժամանակը, Սէն Լուիի վարժարանը մտնելով, հոն նախնական կրթութիւնն աւարտելէ յետոյ, Բազմարուեստեան Գալորցը մտնաւ :

1842 ին հանքաց պաշտօնատան մէջ ծառայեց, և ապա ուսուցչական զանազան պաշտօններ վարեց ամենաբարձր վարժարանաց մէջ : Երեսուն և չորս տարեկան էր, երբ անդամ ընտրուեցաւ գիտութեանց Ակադեմիոյ, բայց մինչեւ ընտրութիւնը, Պ. Ժողէֆ Պէրթրան՝ թուագիտութեան և գրահաշուի քանի մը գործեր հրատարակած էր . ընտրուելէն վերջն եւս հրատարակեց գիտական այլ և այլ գործեր : Իւր յիշատակութեան արժանի երկու գլխաւոր գործերն են՝ Նոր Ասորիականութեան հետեանց և Պարսկական Գիտութեանց Ակադեմիոյ անուն գրքերն :

Պ. Ժողէֆ Պէրթրան Պատուոյ Լէգէոնի սպայի աստիճանն ստացաւ 1867 օգոստոս 14 ին, և գիտութեանց Ակադեմիոյ մէտընջեանական քարտուղար է 1874 նոյեմբեր 22 էն ի վեր :

ԼԻԻՏՈՎԻՔ ՀԱԼԵՎԻ

Ի վաղուց անտի Լիւտովիք Հալէվի սահմանեալ էր օրին մէկն Ակադեմիան մտնելու : Իւր մեծ հայրն՝ Իբրիթ Լըպա՝ Ֆրանսական Ակադեմիաներու ճարտարապետն էր և երկար ժամանակ ղեկարուեստից Ակադեմիոյ երիցագոյն անդամն եղաւ : Հօրեղբայրը՝ Ֆրոմանթէլ Հալէվի՝ ղեկարուեստից Ակադեմիոյ նուագային ճիւղի անդամ էր, և յետոյ եղաւ մշտնջենական քարտուղար : Վերջապէս, իւր հայրը Լէոն Հալէվի, բազում անգամներ պատկուեցաւ Ակադեմիայէն :

Լիւտովիք Հալէվի ծնած է ի Փարիզ 1854 ին : — 1852 էն մինչեւ 1858՝ պետական զանազան պաշտօններու մէջ ծառայեց, իբր քարտուղար Պետական խորհրդոյ, Գաղթականաց նախարարութեան և Օրէնսդիր ժողովոյ . այս զանազան պաշտօններու մէջ էր որ այժմեան Ակադեմիական օրին մէկն յանկարծ հաճոյք զգաց վիպասանութիւն և թատերերգութիւն միանգամայն գրելու : Երկու ճիւղին մէջ ալ իւր առաջին փորձերը չյաջողեցան, և հաւանօրէն գրական ասպարէզէն պիտի քաշուէր, եթէ դիպուածով Օֆէնպախի չհանդիպէր մի օր :

Օֆէնպախի և Մէյլաքի հետ միանալով, Հալէվի անոնց աշխատակցութեամբ զբոսեց այն դեղեցիկ թատերերգութիւններն որք թէ՛ Փարիզի և թէ՛ օտար երկիրներու մէջ այնքան գնահատեցան :

Բայց Հալէվիի դրօսեցուցիչ հին գործերուն համար չէ որ Ակադեմիան անդամ ընտրեց զինքն, այլ անշուշտ իւր նորագոյն վիպասանութեանց համար, յորս կը յիշուի գլխաւորաբար Աբբայ Քանախի (1) :

Հալէվի թէպէտ մենակեաց կ'ապրի այժմ՝ Տուէ փողոցը, թիւ 22 տանը մէջ, այլ աւել Քարիզ, կը ճանչնայ զնա : Գաղցր տեսակցութիւն մ'ունի, զուարթ միտք մը և ամենուրեք բարեկամներ :

Նորընտիր Ակադեմիական 1868 ին ամուսնացած է Օր. Լուիզ Պրէկէի հետ և 1864 ին Պատուոյ Լէգէոնի շքանշանն ստացած է :

(1) Լոսն էր թէ աղբայրն ականաւոր գերդաստանէ Օրիորդ մը այս վէպ թարգմանած է ընտրին արժանի օճով, և ազնիւ թարգմանուհոյն Վսեմ եղբայրն, առաջնակարգ գրագէտ, գրած է ընտիր նախաբան մը որ ի վեր կը հանէ կրկին արժանեաց եական մասունքն : Կը յիշեմ նաեւ թէ ասկէ երկու տարի առաջ Մասիսի մէջ « Վահրամ » ստորագրութեամբ հրատարակեալ նշանաւոր թղթակցութիւն մը Հալէվիի այս գործին համար « Բոլոր խունկ է և հալուէ » ըսած էր :

Գործն արդէն յանձնուած է տպագրութեան, և փափագելի էր որ ինչչափ հար է շուտ տեսնենք « Աբբայ Քանախի » վէպի հրատարակումը :

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Ա Կ Ն Ա Ր Կ Մ Ը

ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՅ ՎՐԱՅ

Աշխարհագրութիւնը որ վարժարանէն դուրս այնքան հետաքրքրաշարժ և օգտակար գիտութիւն մ'է որքան ձանձրանալի վարժարանին մէջ՝ օր քան զօր մեծամեծ յառաջդիմութիւններ կ'ընէ :

Երկրագնդի ամեն կողմը մեզ ծանօթ ըլլալէ հետի է : Ձերթանք մինչեւ բեւեռները . մեզի շատ մօտ և շատ դիւրամատչելի տեղերու վրայ բոլորովին ազէտ ենք և այս տգիտութիւնը չէ թէ միայն մեր ազգին մէջ դոյութիւն ունի , այլ նաեւ ամենէն քաղաքակրթեալ գաւառաց մէջ հասարակ ժողովուրդը արտառոց գաղափարներ ունի օտար երկիրներու մասին :

Այս յառաջաբանով չկարծուի թէ քըննադատական կամ սկզբանց վրայ պիտի ձառնամ . այլ նպատակս է կարեւորութիւն ընծայելու այն տեղեկութեանց որ պիտի հաղորդեմ ի ստորեւ և որք ցոյց կուտան թէ գիտութեան ինչպէս ամեն ճիւղերը նոյնպէս նաեւ աշխարհագրութիւնը ունի աշխատողներ , գործողներ և յաջողութեամբ պսակեալ ձեռնարկներ :

Աշխարհագրութեան մասին առաջին ներկայանալի գործն է Պրիւսէի ազգային աշխարհագրական ձեռնարանին պատրաստած Արաբը որ թէպէտ միմիայն Պելճիոյ քաղաքացի կը վերաբերի , սակայն արժանի է ամենուն ուշադրութեան ինչու որ արհեստական և միանգամայն տեղագրական տեսակէտով ընտիր գործ մ'է :

Նմանապէս գովեստիւք կը խօսուի Պ. Ամի Պուէի գիրքը Եւրոպական Տաճկաստանի երկրաբանական նկարագրութիւնն ընողը Այս գործ թէպէտ նոր չէ , սակայն այս անգամ նորէն սպաղրուած է մեծամեծ յաւելուածներով և ի մէջ այլոց $\frac{1}{450000}$ մեծութեամբ Մօնթէնէկրօի երկրաբանական մի պատկերը :

Նմանապէս աշխարհագրական ամենակարեւոր դէպքերէն մին է գերմանական

գաղթականութեանց ի Միացեալ Նահանգք անդադար դիմումը և յայտնի գործողութիւնն ապագային նմանօրինակ գաղթականութեանց Ամրիկէի մէջ հաստատուիլը : Այս խնդրոց վրայ ընտիր յօդուած մը հըրատարակուեցաւ Մէլլէյլէն գերմանական հանդիսին մէջ : Նոյն յօդուածէն կ'իմանամք թէ 1881 էն ց1885 Աղլանտեան ովկիանոսն անցնող Գերմանացիք 668,000ի կը հասնին : Այս եռամեայ շրջանին մէջ համայն Եւրոպայէն գաղթողաց թիւն է 1,800,000 ըսել է թէ $\frac{1}{3}$ է աւելին Գերմանացիք են : Մեծն-Բրիտանիա 300,000 (որոյ կէսն Իռլանտացիք) և Ֆրանսա 16,000 միայն ունին սոյն գումարին մէջ :

Բայց Գերմանիոյ ո՞ր կողմէն աւելի կը գաղթեն . այս ուսումնասիրել անօգուտ չէ : Սկիզբները Ռէն գետին շրջակայ գաւառներն աւելի գաղթական կարտադրէին . այսօր գաղթողաց կեդրոնն դէպի հիւսիսային արեւելեան կողմն փոխադրուած է : Մինչդեռ Մեքլնբուրկ և Բօմերանիա գաղթականութեան համագումարին 100ին 15,4ը Հանովր , Պրէօնպիլդ , Օլտէմպուրկ և Պրէմ , 100 ին 10ը , արեւմտեան Բրուսիա , 100 ին տասը կուտային , այսօր Ալզաս-Լօրէն 41,7 առ 100 կ'երէն և հիւսիսային Գերմանիա 100 ին 62,8 տոկոս զամեն հարաւային Գերմանիա 100 ին 37,2 ու միայն կը մասնակցի :

Նմանապէս գաղթողը այլ եւս չէն դիմեր այն տեղեր ուր ի սկզբան հաստատուելու կ'երթային : Մինչեւ 1840 գլխաւորապէս դէպի Բանարլանիա կը փոխադրուէին . ապա հոսանքը Նիւ-Յօրքի նահանգը դիմեց : Այսօր բազմաթիւ են ի Վիրջինիա և երկրորդական կարգէ են ի Միննէզօթա յիլլինուա և ի Նիւ-Յօրք գնացողաց թիւն :

Անցնինք ուրիշ նիւթի .

Ամրիկէի մէջ մեծ են նորանոր խուզարկութիւնը որ խել մը ձամբորդք , առաւել կամ նուազ արժանի յաջորդք Լիվինկսթոնի և Սթանլիի շարունակաբար կը ձեռնարկեն , ստեպ կեանքերնին վրայ տալով : Ֆրանսացիք գլխաւորաբար քաղաքական շահերու համաձայն կը դատեն այս հետադոտութիւնը և կառավարութիւնը ըստ կարելոյն կը քաջալերէ ձամբորդները : Անցեալ տարի Պ, Ֆուքօ Ֆրանսացին յունիսի մէջ ձանդաղ ելլաւ Թանժէրէն ի Մարօք երթալու համար :

Նա ուղղակի գնաց ի Ֆէս, անտի ուղիղ ճամբով ի Թաւրա ապա Ուէտ-էլ-Ապրիտի ձորէն անցնելով Թաւրիա գնաց և անտի հասաւ ի Սահարա: Այս աշխարհագրական անուանք չեմ կարծեր թէ ծանօթ ըլլան շատերու: Նոյն իսկ աշխարհացոյց տախտակներու վրայ ամենքն ալ չեն գտնուիր. թող որ ճամբորդ Ֆրանսացիք իրենց տկար հնչուամովը կ'աղաւաղեն արաբական և այլ լեզուաւ շինուած անուններ ու անհասկանալի և մինչեւ իսկ բոլորովին իսկականէն տարբեր վիճակի մէջ մեզ կը հասցնեն: Ահա այս պատճառաւ զանց կ'առնեմ մի առ մի յիշել զանազան վայրերու մասնաւոր անուանքը:

Պ. տը Ֆուքօ, Սահարայի մէջ բաւական Օվասիաներ այցելեց, քննեց և նոցա աստեղագիտական դիրքն որոշեց որով պիտի կարենայ աշխարհացոյց տախտակի մը վրայ անոնց դիրքն որոշել: Անօգուտ է ըսել թէ ըստ այս ճամբորդին սխալ և թերի են մեր ունեցած բոլոր աշխարհացոյց քարտէսները:

Տը Պիւօնֆանցի մարքիզն ճամբորդութիւն մ'ըբաւ ի Սուտան: Նա 1881 ապրիլին Տրիպօլիսէն մեկնած էր և 1869ին Նախ-թիկալի հետեւած ճամբան գնացած էր: Ինքը թէպէտ մինչեւ Թօմպուքթու հասած էր, բայց ճամբան կողոպտուեցաւ և կորոյս իւր հաւաքած կարեւոր իրերն. մի միայն Նիփէրի մի քարտէսը կրցաւ ապատել այս կողոպտուէն:

Տօթէօր Քոլէն, Անեկալի գլխաւոր մասերէն մին Ֆալէմէի ձորը հետազոտեց: Ֆալէմէ գետին ջուրը ոսկւոյ փոշի կը պարուհակեն և գետափին լի գեղեցիկ տունկերով ու առատ թուռններով որսորդաց համար արքայութիւն մ'է:

Քաղաքական խնդիրներու տեղեակ անձինք Քօնկօի մասին Պէրլինի մէջ գումարեալ գետնախորհրդոց առթիւ բաւական տեղեկութիւնք ստացած են: Այժմ Պ. տը Պրացցայի ընկերներէն Պ. տը Պալէյ որ նոր վերադարձաւ ի Ֆրանսա, մեծ հետաքրքրութիւն կը պատճառէ մեզ նոր լուրեր բերելով այդ երկրին վրայ, բայց Պ. Պալէյի ըսածներն ու գրածներն չեն կարող այնքան յուզուիչ պատճառել որքան Պ. Սթանլէյի ի Քօնկօ ճամբորդութիւնը որ հրատարակել արտօնեց Պրիւսիլի մէջ: Դժբաղդաբար այնքան ըսելիքներ ունիմ որ չէ կարելի Պ. ըՍ-

թանկէյի ի լոյս ընծայած տեղեկութիւնքը համառօտիւ իսկ պատմելու:

Ժամ է արդ որ Ասիա անցնինք.

Անգլիացիք և Ռուսք միայն Ասիոյ մէջ հետազոտութիւններ կ'ընեն: Ռուսիան իւր ճամբորդներն կը մղէ դէպի Թիւրքիստանի անծանօթ կողմերը մինչդեռ Անգլիացիք Ասիական Տաճկաստանի սահմանադրուիները գտնուած երկիրներու վրայ հետաքրքիր աշխարհագրական տեղեկութիւնք կը հաւաքեն անդադար:

Անգլիա, երբ Պէրլինի վեհաժողովէն վերջ հիւպատոսներ զրկեց Ասիոյ այն կողմերը. ադոնց գիտական պաշտօններ ալ յանձնարարեց: Պ. Վիլսոն որ ընդհանուր հիւպատոս կոչուեցաւ 1879 ին՝ իւր հրամանին ներքեւ ունենալով այլ հիւպատոսներ կարեւոր աշխատութիւն մը յօրինեց և այս անգամ հրատարակեց անգլիական քրօնիկ հանդէսին մէջ: Այս աշխատութեան աշխարհագրական մասերն կը վերաբերին Ալիայէն մինչեւ Սիրիոյ սահմանադրուիք Տաւրոսի, Անգլի-Տաւրոսի, Կիաւեր-տաղի, Պէյ-լանի անցքին որ Իսկէնտէրուն, Անտիոք և Հալէպ կը տանի. նմանապէս քրօնիկ Պէնէթ դէպի Կիլիկիոյ դաշտը առաջնորդող Ճիհունի կիրճերը քննեց:

Սոյն աշխատութեան չէնք կարող համակարծիք ըլլալ մեծաւ մասամբ յայտնած աննպաստ կարծեացը համար: Սակայն նա մեր բարեկամը չըլլալով իսկ նկատողութեան արժանի է այն գովեստից առատ բղխումը որ չէ կարող զսպել Ասիական Տաճկաստանի այդ բնական հարստութեան մասին: Հանքային և երկրագործական առատութիւնը միայն Ամերիկայի մէջ նմանն ունի, կ'ըսէ, և չկայ երկիր մը որ պտղոց պատուականութեան մասին կարենայ մրցիլ այս երկրին հետ: Ամասիոյ խնձորները, Նիկիւրի տանձը, այլ գաւառաց խաղողը, թուզը, ձիթ ապտուղը՝ անգլիական շաքաթաթերթին ընթերցողաց ակործակը գրգռելու աստիճան գովեստիւր կը յիշատակուին:

Գիտենք արդեօք թէ ամբաւ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, քաօլէն, պօրաքս և հանքածուխ ունինք ասիական գաւառաց մէջ:

(Շարունակէ)

Յ. Ե.

ՆՈՐԱՎԵՊ

Հ Մ Ա Յ Ե Ա Լ Ծ Ա Ծ Ա Ն Ը

Ա.

Ատենօք, Ֆրանսայի մէջ գիւղապետ մը կար, որ՝ բոլոր գիւղապետաց նման՝ սագի պէս տխմար էր, և որ՝ ինչպէս սովորութիւն է՝ լուսնկայի պէս աղւոր աղջիկ մ'ունէր։ Ինչպէս նաեւ սովորութիւն է, այդ աղջիկն, որ Զիլի կը կոչուէր, Ժիլթէն անուն սիրահար մ'ունէր, որոյ խօսքն անգամ ոտք կը հանէր գիւղապետին ջիւերը։ Գալով այս վերջնոյն, Պառպիպոն կը կոչուէր և Աստուծոյ դէր կը կատարէր Թուէրինեի-Տէնտի թեմին մէջ։ Այս բաները կ'անցնէին հին բարի ժամանակաց մէջ։

Գիւղապետն իւր կեանքը կ'անցունէր աղջկան սիրահարն հալածելով և սպասելով այն այցելութեան զոր նահանգին կառավարիչ տը Ռատինուար մարգիդը խոստացած էր ընել Թուէրինեի-Տէնտի թեմին, անձամբ քննելու համար երկրին վիճակը։ Սակայն այս այցելութիւն, երկար ատենէ ի վեր ծանուցեալ, երբէք տեղի չէր ունենար, և գիւղապետն այս բանին վրայ կը ցաւէր մանաւանդ սա պատճառաւ որ միտքը դժբաժնէր արեւելի օգուտ քաղել աղերսագիր մը ներկայացնելու համար մարգիդին, և անոր համակրութիւնը չահելու համար՝ յաղթական ընդունելութիւն մ'ընելով։

Սակայն առաւօտ մը յանկարծ պաշտօնապէս ծանուցուեցաւ թէ մարգիդն երկրորդ օրը պիտի հասնէր։

— Վերջապէս, գոչեց գիւղապետն։ Այս այցելութենէն կախում ունի սպառնալիքս։ Պէտք է հաճելի լինիլ մարգիդին։

Երկար ատենէ ի վեր տեղեկութիւններ հաւաքած էր այդ աշխուական անձին ճաշակաց վրայ, և ստոյգ ու արժանահաւատ աղբիւրէ գիտէր թէ մարգիդն աւելորդապաշտ էր ու ձուկը շատ կը սիրէր, նահանգէն անցնող վճուկ մը կ'ընցուցած լինելով իրեն թէ այդ ջրակեաց կենդանին տարօրինակ կերպով կ'երկարէր կեանքն, և թէ

ամեն օր ձուկ ուտող կառավարիչ մը գիւրաւ կ'անցնէր հարիւրը։ Դժբաղդաբար նահանգը երկրին ներսերն էր. ջուրն հազուագիւտ էր անդ, ինչպէս եւ ձուկը։ Գիտէր նաեւ թէ կառավարիչն, լաւ սկզբանց մէջ ծնած ու մեծցած մարդ մը, իւր հարց աւանդութիւններն ամբողջապէս պահած էր և հաւատ կ'ընծայէր դէսերու, հմայիչներու, կախարչներու, և թէ վճուկին խօսքն իբր երկնային պատգամ ընդունած էր։

Գիւղապետն, որ այս ամենը գիտէր, գաւառին մէջ հանրածանօթ Բէտրիյեօ անուն գողորսորդ մը կանչել տուաւ իւր տունն և ըսաւ անոր։

— Բէտրիյեօ, տղա՛ս, գիտես որ քան անգամ կախաղան ելնելու արժանացած ես։

— Պա՛հ, ըսաւ Բէտրիյեօ, ո՞վ կ'ըսէ անիկայ։

— Ո՞վ պիտի ըսէ, ես, թշուառական։ Բայց գիտես որ բարի սիրտ մ'ունիմ և միշտ աչք գոցած եմ։ Պէտք է որ այսօր երախտագիտութիւնդ ապացուցանես ինձ։

— Ի՞նչ կերպով։

— Կառավարչին տալիք հացկերոյթիս համար ձուկի մը պէտք ունիմ, և անոր համար կանչեցի քեզի որ երկրին ծակը ծուկը գիտես։ Բայց կ'ուզեմ որ ձուկը չտեսնուած բան մ'ըլլայ։

— Հը՛, կը հասկնամ, պատասխանեց գողորսորդը. սակայն, նզովի՛ց արմատ, (իւր սիրելի խօսքն էր այս) ձուկն հազուագիւտ է հոս, ինչու որ գետակը միշտ չոր է։ Իրաւ է թէ քանի մը ծերունի բարեկամներ ըսած են ինձ թէ ծածան մը մը կայ Ուռենեաց լճակին մէջ, բայց հիմա այդ ձուկը շատ ծեր ըլլալու է, եթէ երբէք կ'ապրի։

— Հոգ չէ, թող ծեր ըլլայ. ասով աւելի պարարտ կ'ըլլայ։ Վերջապէս, երիտասարդ թէ ծեր, արու թէ էգ, հոգս չէ, միայն թէ բերես։

— Է՛, նայինք, բան մը կ'ընենք։

— Մինչեւ վաղը քեզի ժամանակ կուտամ։ Գլխուդ ձարը տես. եթէ ծածանն ինչ չբերես, չեմ գիտեր թէ կատաղութիւնըս ինչե՛ր ընել կուտայ ինձ. բայց կը վստահեցնեմ թէ հետեւեալ օր հրապարակին ծառէն կախել կուտամ քեզ։

Բ.

Հետեւեալ օրը, մութն ու լուսուն, Բէտրիյեօ գիւղապետին առջեւ կ'ելէր :

— Պարո՛ն, ըսաւ, գիշերն ի բուն լճակը պրպտեցի և յաջողեցայ ծածանը որսալ :

Այսպէս խօսելով, խոշոր կողով մը բացաւ, զոր ձեռքը բռնած էր, և սքանչելի ծածան մը ցոյց տուաւ, որ տակաւին կ'երթար թաց խոտերու մէջ տեղ :

— Աստուած իմ, խելքիս պիտի գայ, գոչեց գիւղապետն :

Իւր կինը կանչեց, իւր Զիզի աղջիկը կանչեց, իւր ծերունի սպասուհին Վէրոնիքը կանչեց և անոնց ցոյց տուաւ պարարտագեղ ձուկը :

— Կառավարիչը մատներն ալ հետը պիտի ուտէ, կը գոչէր գիւղապետը՝ ձեռները չիկելով :

— Կը համեմենք զայն ու կը խորովենք, ըսաւ Վէրոնիք. այս կերպով աւելի համեղ կ'ըլլայ :

— Այո՛, պատասխանեց գիւղապետը. բայց տակաւին կ'ապրի և կառավարիչը դեռ վաղն աստ պիտի հասնի. ուստի պէտք է անմիջապէս մեր պարտէզին աւազանին մէջ դնել զայն : Այս կերպով աւելի թարմ կը լինի :

Ծածանը աւազանին մէջ նետուեցաւ և գիւղապետն ըսաւ Բէտրիյեօի .

— Ոչ միայն զքեզ կախել չպիտի տամ, այլ և ոսկի մը պարգեւ կուտամ քեզ :

Ահ, յարեց հառաչելով, եթէ ուրիշ ոսկի մ'ունենայի :

Այս անխորհուրդ խօսք պարապը չգնաց. Բէտրիյեօ կը յեղյեղէր զայն իւր բնակարանը վերադարձած միջոցին .

— Նշողից արմատ, կ'ըսէր ինքնիւրեն, գիւղապետն երկրորդ ծածան մը կ'ուզէ, ես ալ երկրորդ ոսկի մը : Աւասիկ երկուքս ալ կատարելապէս համեմայն ենք, բայց ի՞նչպէս ընեմ :

Գիշերն ի բուն աղոր վրայ մոածեց և առաւօտեան գէմ ձեռքը ձախտին գարկաւ գոչելով .

— Ի՛նչ ալ աւանակ եմ որ աւելի կանուխ միտքս չիսկաւ : Ասկէ գիւրին բան մը չկայ և տխմար գիւղապետն ալ բնաւ չպիտի նշմարէ եղածը :

Լուսնայէն քիչ մ'առաջ տունէն դուրս ելաւ և կողով մ'առնելով գիւղապետին պարտէզէն ներս սողակեցաւ : Այդ ժամուն աւանին ոք կը քնանար տակաւին : Բէտրիյեօ յուշիկ յուշիկ աւազանին մէջ իջաւ և ծածանն առաւ :

Ժամ մը վերջ նորէն կը զարնէր գիւղապետին դրան, որ տակաւին կը ննջէր խոր քունով մը :

Վէրոնիք դուռը բացաւ, և գողորսորդին գալուն պատճառն իմանալով, վազեց արթնցնել իւր տէրը, գոչելով .

— Պարո՛ն, աչքերնիդ բացէք, Բէտրիյեօ ուրիշ ծածան մ'ալ բերաւ :

Գիւղապետն անկողնէն դուրս ցատկեց, քունը գլուխը, և հագուելու ատեն ինքնիրեն հետեւեալ խօսքերը կ'արտասանէր բարձր ձայնով .

— Ծածան մը, երկու ծածան . . . Նախախնամութեան մատը յայտնի կ'երեւայ այս գործին մէջ . հասակովս մոմ մը վառել պիտի տամ Մայր Աստուածածնայ պատկերին առջեւ . . . Կառավարիչը շատ գոհ պիտի ըլլայ . . . ուրախութենէս պիտի հիւընդնամ . . . Վէրոնիքին ըսեմ որ բուսաջուր մը ելիէ ինձ :

Խոհանոց վազեց, ուր բոլոր ընտանիքն ժողովուած էր և երկրորդ ծածանը կը քննէր :

— Առջինէն աւելի խոշոր է, կ'ըսէր տիկին Պարպիզոն :

— Այո՛, այդպէս է, գոչեց գիւղապետն, և աւելի փայլուն : Վստահ եմ որ առ նուազն կէս լիտր աւելի կը կշռէ : Աս ի՞նչ կերպով ընենք :

— Գինիով կը տապկենք, ըսաւ Վէրոնիք :

— Այո՛, առաջինն համեմով կը խորովենք, երկրորդը գինիով կը տապկենք : Երկու տեսակ ձկնեղէն . . . կառավարիչը մատներն ալ հետը պիտի ուտէ :

— Մինչեւ արմուկն, ըսաւ գիւղապետը մատները ճարճատեցնելով : Բայց արտորապէս հարկ չկայ : Աս ալ միւսին պէս կ'ապրի և պէտք է չուտով աւազանը նետել :

Մինչդեռ այս գործողութիւնը կը կատարէին, գիւղապետը կ'ըսէր Բէտրիյեօի .

— Բարեկամս, որովհետեւ այսուհետեւ ասանկ պիտի կոչեմ քեզ, այս անգամ մէկ ոսկի չպիտի տամ, կ'արժէ որ աւելի առնուս : Աւասիկ երկու ոսկի : Շէնքով շնորհ-

քով գործածէ զանոնք, պարկեշտ մարդ եւ ղիւր, և գողորսորդութենէ ետ կեցիր, ինչպէս որ մինչեւ հիմա ըրած ըլլալու էիր թէ խորհրդոցս ականջ կախէիր :

— Պարոն գիւղապետ, ըսաւ Բէտրիյեօ, կը կարծեմ թէ ապուշի խօսքեր կ'ընես, որովհետեւ ո՛ւսկից պիտի գտնէի այս ծածաններն թէ քիչ մ'ասդին անգին գողորսորդութիւն չընէի : Անտարակոյս դուք չէիք որ ձեր խոշոր փորով լծակին մէջ պիտի մըտնէիք :

Գիւղապետն, սրտնեղացած այս ղիտողութենէն որուն ոչինչ կրնար պատասխանել, ոտքի հարուած մը տուաւ իւր կառուին որ ձուկին հոտը լսելով վազեր եկեր էր :

Նոյն պահուն սուրհանդակ մը գալով ծանոյց թէ Պ. կառավարիչն, կարեւոր գործոց պատճառաւ, երկրորդ օրը պիտի հասնէր :

Բէտրիյեօ իւր տունը դարձաւ բոլորովին ուրախ երեք ոսկի ունենալուն վրայ, և հետեւեալ օր երրորդ անգամ լինելով գիւղապետին ներկայացաւ ծածանին հետ, զոր ժամ մ'առաջ աւազանէն որսացեր էր :

Գիւղապետն աղաղակ մ'արձակեց և սրտայուզութենէն մարեցաւ ինկաւ, հարկ եղաւ քունքերը չիւել խեղճ գլուխը բերելու համար :

— Հիմա կը մեռնիմ, կը կրկնէր, հիմա կը մեռնիմ : Միւս երկուքէն ալ խոշոր ու ծանր է այս :

— Պարոն, գոչեց Վէրոնիք ձեռքը ձակտին զարնելով, միտքս բան մը կուգայ :

— Ի՞նչ, հարցոց գիւղապետը :

— Գիտէ՞ք թէ ի՞նչ պիտի ընենք այս երրորդ ծածանը :

— Ո՛չ, և հասկնալ կ'ուզեմ :

— Ըսե՛մ. աս ալ ապուրով կ'եղինք :

— Ո՛ւսկից ալ գտար, Վէրոնիք, ծածանի ապուր, համեմով խորոված ծածան, գինիով տապկած ծածան. ըսել է ծածանէ ձալ մը պիտի տանք : Կառավարիչը խեղճ պիտի թուցունէ :

— Ա՛հ, Աստուած իմ, գոչեց Վէրոնիք, Պ. գիւղապետը նորէն կը մարի :

Երբ խեղճ գլուխը եկաւ, գիւղապետն երեք ոսկի տուաւ Բէտրիյեօի և հրամայեց որ լաւ մը կերակրեն զայն :

— Օ՛ն, ըսաւ Վէրոնիքի, վաղը առաւօ-

տուն կանուխ գործի սկսէ, կրակարաններդ վառէ և ամեն պատրաստութիւններդ տես : Խնդիրը մեր ամենուս երջանկութեան վրայ է : Եթէ ծածանները դէշ եփուին և կառավարչին հաճոյ չլինին, սուր մը կ'առնում և փոքս կը խոթեմ :

Գ.

Բէտրիյեօ տուն դարձաւ բաւական գինով : Գլորոցէ մը հանեց առաջուց ստացած երեք ոսկիները, անոնց վրայ աւելցուց գիւղապետին տուած նոր ոսկիներն, և սկսաւ զբօսնուլ մէկ ձեռքէն միւսը պարպելով զանոնք և կրկնելով :

— Երեք կարմրուկ, երեք կարմրուկ ալ, կ'ընէ վեց կարմրուկ :

Ժամու մը չափ այս ախորժեղի գործով զբաղելէ յետոյ, ինքնիրեն կ'ըսէր .

— Նշովից արմատ, ուրեմն ծածաններն այնքան համեղ են որ այդ խռփած փախուկըն այսքան սուղ կը գնէ զանոնք . . . Սա կայ որ ես ծածանին պոչէն անգամ կերած չեմ . . . Է՛, միտքս բան մը կուգայ . . . Գիւղապետը կը կարծէ թէ երեք ծածան ունի, մինչդեռ իրօք միայն մէկ հատ ունի . . . Ուրեմն ինչո՞ւ համար ես իսկ չճաչակեմ զայն . . . Նշովից արմատ, կը կարծեմ թէ Պ. կառավարչին ակռայներէն սուր են իմ ակռայներս . . . Քիչ մը մտմտամ այս գաղափարիս վրայ :

Հետեւեալ օր, դեռ արշալոյսը չծագած, ձիաւոր սուրհանդակ մը գիւղ մտաւ մըտրակը շաչեցնելով օդին մէջ, և ծանոյց թէ Պ. կառավարիչն հեռի չէր և թէ քիչ ատենէն գիւղացիք իւր ներկայութիւնը պիտի վայելին :

Այս լուրն առնուին պէս, գիւղապետը խոհանոց վազեց, ուր Վէրոնիք, իւր կրակարանները վառելէ վերջ, սիւս կ'ստըկէր :

— Շո՛ւտ, յո՛ւտ, գոչեց, կառավարիչը կը հասնի, երթանք ծածանները որսալու : Եւ ի մի ոտիւն աւազանին քով հասաւ :

Երկար կը լինի աստ նկարագրել գիւղապետին զարմացումն, ապուրթիւնն և սարսափն երբ վերջապէս համոզուեցաւ թէ աւազանը բոլորովին թափուր էր : Երեսին գոյնը կասկածէն կարմրի դարձաւ և կար-

միտէն կանաչի . կատաղի աղաղակներ ար-
ձակեց , գետնին վրայ թաւալեցաւ , և կեղ-
ծամը փետտեց :

Վէրոնիք բառ մ'իսկ չէր համարձակեր
արտասանել :

Գիւղապետին ձայնը լսելով ամեն ոք
վազեց հասաւ . տուն փոխադրեցին զնա և
գաւաթ մը մէկխայի ջուր խմեցին :

Ինքզինքը քիչ մը գտած էր և խուռ հե-
ծեծանքներ կ'արձակէր , երբ յանկարծ Ժի-
լթէն սիրահարն իւր առջեւ երեւցաւ , իւր
թեւին տակ մեծ կապոց մը կրելով :

— Թշուառակա՛ն , գոչեց գիւղապետը ,
կուգաս հրճուի՞լ իմ յուսահատութեանս վը-
րայ :

— Ընդհակառակն , ըսաւ Ժիլթէն , կու-
գամ զձեզ փրկել :

— Դո՛ւն , և ի՞նչ կերպով . ըսէ՛ տես-
նեմ : Ծածաններս ինձ պիտի վերադար-
ձընես :

— Ո՛չ , բայց աւելի փափուկ բան մը կը
բերեմ ձեզ , կառավարչին ճաշին համար ըս-
քանչելի կտոր մը :

— Աւարտէ՛ , թշուառակա՛ն , ի՞նչ կը
բերես :

— Վարագի կողիկ մը :

— Վարաղը ծածան չէ :

— Գիտեմ , բայց նորէն վարաղ է :

— Ինչ որ է , տո՛ւր , և օրհնեալ եղիր :

— Այդ չբաւեր :

— Ուրիշ ի՞նչ կ'ուզես :

— Ըսէ՛ք ինձ . « Օրհնեալ լինիս , գաւա-
կըս » :

— Ի՛նչ , թշուառակա՛ն , կ'ուզես օգո՞ւտ
քաղել իմ տագնապալից կացութենէս :

— Կարծեմ :

— Զիզիի ձե՞ռքը կը խնդրես :

— Այո՛ :

— Ո՛հ , բնաւ երբէք . նախամեծար կը
համարիմ ամօթէ ու վշտէ մեռնիլ :

— Դուք գիտէք , ես վարազս կը տանիմ
Իւզի . մէջ ետեւ հաւկիթ կը հանէք կա-
ռավարչին :

— Բայց զիս մեռցնե՞լ կ'ուզես , աւա՛-
զակ :

— Այդ ալ փոյթս չէ :

— Օ՛ն , կը հաւանիմ , քանի որ հարկ ան-
հրաժեշտ է : Տուր ինձ վարաղը :

— Կեցէ՛ք վայրկեան մը . կանչել տուէք

օրիորդ Զիզին :

Օրիորդ Զիզի կանչուեցաւ . ցատկեց հօրը
վիզը փաթթուեցաւ , որ զգաց թէ իւր սիր-
տը կը կակղանար , բացաւ իւր ընչատուփն
և հանդիսապէս օրհնեց երկու սիրահարնե-
րը : Վէրոնիք աչքերը կը սրբէր գոգնոցին
ծայրով :

— Տո՛ւր վարաղն , ստահակ , ըսաւ գիւ-
ղապետն իւր ապագայ փեսային :

Ժիլթէն իւր կապոցը սեղանին վրայ
դրաւ և բացաւ :

— Երկի՛նք , ի՛նչ կը տեսնեմ , գոչեց գիւ-
ղապետը : Բայց ատիկա պարզապէս հասա-
րակ խողի ձագ մ'է :

— Ադէկէց ի՛նչ կ'ելլայ , ըսաւ Ժիլթէն :

— Ի՛նչպէս , ի՛նչ կ'ելլայ :

— Կառավարիչը բոլորովին ապուշ է , յա-
րեց Ժիլթէն . եղածը չպիտի հասկնայ : Ես
ամեն բան վրաս կ'առնում :

Նոյն միջոցին , փողերու մեծադիւրրդ աղ-
մուկ մը լսուեցաւ պատուհաններուն տակ :
Կառավարիչը կը հասնէր : Գիւղապետն իս-
կոյն ընդ առաջ վազեց : Կառավարիչը ներս
մտաւ իւր կարեւորութեանը համոզուած
մարդու մը հանդիսաւոր ու գոռոզ քալ-
ուածքով : Յետոյ վեհաշուք կերպով ճաշա-
սրահը մտաւ :

— Պարոն կառավարիչ , ըսաւ այն ատեն
Ժիլթէն , ձեր գալուստն այս տան մէջ , որ
մշտնջենապէս պիտի սահէ այսքան բարձր
այցելութեան մը յիշատակը , կը զուգադի-
պի հրաշալի դէպքի մը հետ որ հասարակ
մտքերը չփոթեցնելու բնութիւն ունի , բայց
զոր անտարակոյս պիտի կարենայ մեկնել
Ձեր Վսեմութեան կորովամոտութիւնը :

— Խօսեցէ՛ք , երիտասարդ , ըսաւ կա-
ռավարիչն այտերն ուռեցնելով . խօսեցէ՛ք ,
պարապ տեղը չէ որ մեր Վեհափառ Թա-
գաւորն կարեւոր պաշտօններ յանձնած է
ինձ , և ես պարտիմ ամենուն լոյս տալ , խո-
նարհադոյն ինչպէս և մեծադոյն անձանց :

— Լաւ ուրեմն , պարոն մարքիզ , աւա-
սիկ իրողութիւնը : Պ . Պարպիզոն գիւղա-
պետն , իմ աներս որ աւասիկ , երեք սքան-
չելի ծածաններ հայթայթած էր Ձեր Վսե-
մութեան ճաշին համար :

Կառավարիչը բարեացակամ հայեացք մը
նետեց գիւղապետին , որ մինչեւ գետին
խոնարհեցաւ :

— Բայց, յարեց ժիւղթէն, այն վարկե-
նին ուր խոհարարուհին կ'երթար ծածան-
ներն առնուլ՝ դայնս եփելու համար, ա-
նոնց տեղ սկաւառակին մէջ դտաւ . . . Եր-
բէք չպիտի կրնաք մտաբերել թէ ի՞նչ :

— Արդարեւ, չեմ գիտեր . . . կը վարա-
նիմ . . . Երիտասարդ, հետաքրքրութիւնս
կը շարժես : Աւարտէ՛ սլաւամութիւնդ :

— Լաւ ուրեմն, ծածաններուն տեղ վա-
րագի կողիկ մը կը դտնէ :

— Ի՞նչ կը լսեմ, գոչեց կառավարիչն՝
աչերը խոշոր խոշոր բանալով, վարագի փոխ-
ուած ծածաններ. բայց ասոր մէջ կախար-
դութիւն կայ :

— Ամենն այս չէ : Վարագի կողիկ մը
բաւական չնորհրով կերակուր մ'է : Խոհա-
րարուհւոյն ըսի որ խորովէ դայն : Նա ալ
կրակը վառեց, բայց այն վարկեհին ուր
չամփուրը ձեռքը բռնած կուգար, ի՞նչ տես-
նէ աղէկ : Ուրիշ կերպարանափոխութիւն մը :
Վարագի կողիկը խողի ձագի փոխուեր էր :

— Ա՛հ, ազնուական նախնիքս վկայ, տա-
րօրինակ իրողութիւն մ'է այս, գոչեց կա-
ռավարիչը : Վարագի փոխուած խող մը . . .
ո՛չ, ծածանի փոխուած վարագ մը . . . ո՛չ,
կը սխալիմ . . . վերջապէս ասոնք անհաւա-
տալի իրողութիւններ են մինչեւ որ մարդ
աչքով չտեսնէ : Բայց չհաւատալու տեղի չի
կայ : որովհետեւ խողի ձագն հոս, աչքիս
առջեւ է, և ներելի չէ ու է տարակոյս ու-
նենալ : Այս աշխարհիս մէջ ալ ո՛րչափ ար-
տասովոր բաներ կան : Իրողութիւնը պիտի
տեղեկագրեմ վեհ. Թագաւորին, ինչպէս և
պիտի հաղորդեմ իմ գիտուն բարեկամաց :
Բայց, անօթութենէ կը մեռնիմ սեղան նըս-
տինք և սա խողիկէն ճաշակենք : Ինձ նման
փիլիսոփայներն և զօրաւոր մտքի տէր ան-
ձինք կ'արհամարհեն կախարդաց չարածձի-
րութիւններն :

Այս միջոցին, Բէտրիյեօ հանդարտօրէն
կ'ուտէր գիւղապետին ծածանը :

— Խաչ որ, կ'ըսէր ինքնիրեն, իրաւ է
թէ այնքան համեղ չէ, բայց ուտելուս վը-
րայ ալ դժգոհ չեմ : Ուրիշ անգամ եթէ ծա-
ծանի վրայ խօսին իմ առջեւ, դէթ ապուշ
ապուշ բերանս չպիտի բանամ :

ԷՏ. Վ.Ի.Ի.Ի

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ Ք

ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԵՐԳԵՐ ԿԱՐՆԵՅՈՑ

Ի Ա Ա Հ Ի Ք

Լըցեր, սուրբ Կոյս, զիս կարօտով. ե՞րբ պիտոր
գըտնամ քեզի,
Մայլէի դէմքիդ մուրաւով. ե՞րբ պիտոր գըտնամ
քեզի.
Ինչո՞ւ ես միշտ պիւլպիւլի պէս քաշեմ կը գար, կօծ
կ'անեմ.
Ձի դու վարդ մ'ես՝ անուշ հոտով, ե՞րբ պիտոր գըտ-
նամ քեզի,
Մեծ փափաքով՝ ցանկալիիդ ես կը սիրեմ խելքէ
դուս.
Յաւայի սիրալս խոցեր ես, շիջէ չըկայ մեռնելուս.
Համբերութիւնըս կըտրեցաւ, քեզ երեւցուր աչքե-
րուս,
Վառուեր եմ սիրուդ հըրատով, ե՞րբ պիտոր գըտ-
նամ քեզի,
Գան մըխիթարելու խեղճիս քառասուն աղիւ-
կարան,
Բացուի երկինք, հըրեշտակներ, սըրբեր, կուսանք
երեւան.
Չալուի քաղցր սաղ ու սանդուղներ, քեաման, նը-
ւագարան,
Աս սիրալս չի հանգիւր ատով. ե՞րբ պիտոր գըտնամ
քեզի,
Ըստ որում դու մայր գըթած ես, ունիմ շատ
գիւման քովդ,
Իմ կողմանէս սերորէներ փառք տալու թող դան
քովդ,
Ղուկկիանոսը հէջ կը խնայո՞յ՝ չըգըտուի ինչուան
քովդ.
Տէ՛, մեկ յոյս մը տո՛ւր խըրատով. ե՞րբ պիտոր գըտ-
նամ քեզի :

Ո՛վ ցանկալի Կոյս սըրբազան, չէի՞ մի ըսեր քեզի՝
Տերտերդ ներքս հեղան զեղան, չէի՞ մի ըսեր քեզի.
Կուրծքս ճեղքէ՛, բոցակիլեալ խորված սիրտս սէյր
էրա՛.

Դեղ չի գըտուիր՝ բիւր բըժիշկ դան. չէի՞ մի ըսեր
քեզի :

Ներսէս կ'այլիմ, ձէնըս չելլեր, նըստեր եմ սը-
գով ու սուս,

Հախ չունիմ՝ մի, ա՛խ Նազելի, քեզ համար թալկը-
տելուս.

Դու կը մնաս յոյս, ապաւէն, մըխիթարանք տրտ-
մելուս,

Բարեկամքըս կը հեռանան, չէի՞ մի ըսեր քեզի :

Սուրբ պատկերդ իմ աչքիս առջեւ միշտ քաշ-
ուած ինձ կ'երեւի :

Կը ըզմայլիմ տեսութեանդ, դէմքդ է նըման արեւի.
Իմ մի միայն սիրելիս ես, քեզ սիրեցի, սիրտ առւի,
Բոլոր կեանք այ կ'անեմ դուրպան, չէի՞ մի ըսեր քեզի :

Թա՛հ պըզտըկուց Ղուկկիանոսին սէրն ու սէվ-
տան դու եղար,

Հէջ ես լեզուէս վար կը ձըգեմ՝ սուրբ անուշիկ ու-
րախարար .
Աննըման գեղեցկութիւնըդ կու տայ իմ մըտքիս զա-
րար ,
Խեղճ առիթ՝ էրեր փերուշան , չէի՞ մի ըսեր քեզի :

Գանձ է սերդ , ինձ շընորհէ , Կոյս , փողի կարօտ
մի՛ թողուր .
Ես եուրտ չուշիմ , օթեւանդ ա՛ռ , տեղի կարօտ մի՛
թողուր .
Ընկեր եմ վիշտ ու նեղութեան . ծովերու մէջ , կը
ծըփամ ,
Շուտ հասցուր նաւահանգիստըս , լողի կարօտ մի՛
թողուր :
Ի՞նչպէս չըլամ , հայրենական երկրէս եմ գըր-
կըւած ,
Անտիբական ողորմելի քեօշէները մընացած .
Զեռքըս ծոցըս , շըլիքըս ծուռ , խեղճ աղքատ մ՛եմ
ժողոված ,
Տա՛ր գիս քո պայծառ քաղաքըդ , գեղի կարօտ մի՛
թողուր .
Իսաւ՝ մեծ վարձք ալ ունի , բայց ընկած վախտս
է՛ կ'ուսցընեմ .
Աստուածպաշտութեան ծաղիկը՝ դըպրոց պախչան
ըուսցընեմ .
Գիտեմ , Մա՛յր սուրբ , որ կ'ընդունիս՝ քեզի ընծայ
հասցընեմ .
Վարպետութեան վարձք առնելու տըղի կարօտ մի՛
թողուր :
Ղուկիհանոսին գըթած աչքով մէկ նայէ , խիստ
տըկար է ,
Ճառագայթս ես , առանց քեզ՝ իմ լըյս արեւըս խա-
ւար է .
Վառուած սիրտըս՝ աւետարեր հօղմբերդ հովհարէ ,
Դու քաղցրացու դառնութիւնըս , աղի կարօտ մի՛
թողուր :
(ԲԱԶՄԱՎԷՊ)

Ք Ա Ղ Ո Ւ Ա Տ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐԱՅ

8-14 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ս Ր Տ Ա Ք Ի Ն

Ռուսիա մեծ խնամ կը տանի Ասիոյ մէջ
ստացած նոր և ընդարձակ երկիրներուն
քաղաքական , վարչային և զինուորական
կազմակերպութեան : Զինուորական պաշ-
տօնական թերթն՝ Էնվալիտ Ռիւս , կը հրա-
տարակէ հրամանագիր մը որով կարեւոր փո-
փոխումներ ի գործ կը դրուին Անդրկաս-

պեան երկրի զինուորական վարչութեան
մէջ : Անդրկասպեան երկիրը կը բովանդակէ
նոյն անուամբ ծանօթ նախկին զինուորա-
կան գաւառն , ինչպէս նաեւ Ախալի , Թէք-
քէի , Թէճէնտի և Մէրվի Թիւրքմէնաց եր-
կիրներն , և Կասպից ծովու արեւելեան ե-
զերաց բոլոր կղզիներն : Համայն Անդրկաս-
պեան երկիրն ենթարկեալ պիտի մնայ Կաւ-
կասիոյ ընդհանուր կառավարչին վերին հըս-
կողութեան :

— Սթանտարտի թղթակիցն ի Գահիրէ
կը պատմէ խօսակցութիւն մը զոր ունեցած
է Յգիպտոսի Նախարարատեւտ Նուպար փա-
շայի հետ : Ընդհանուր Պարտուց Միջադ-
դային Յանձնաժողովոյն կողմէ եղիպտական
կառավարութեան դէմ բացուած դատին մէջ
Ալեքսանդրիոյ Միջադդային Դատարանին
տուած վճռոյն վրայ խօսելով , Նուպար փա-
շա ըսեր է . « Իմ կարծեօք , Դատարանին
վճիռն անհամաձայն է Պարտուց Կարգադր-
ման Օրէնքին ոգւոյն իսկ : Այդ Օրէնքի
նպատակն էր թոյլ չտալ որ պաշտօնատարը
Պետութեան դրամն Իսմայիլ փաշայի քսակը
լցնէին : Բայց դժբախտապէս , Օրէնքն ա՛յն-
պէս խմբագրուած է , որ Ընդհանուր Պար-
տուց Յանձնաժողովոյն իրաւունք կուտայ
ի դատ կոչելու այն պաշտօնատարներ իսկ
որք Նախարարութեան հրամանաց համե-
մատ կը շարժին : Մինչեւ որ այդ Օրէնք
չվերաքննուի և չփոփոխի , ինքզինք յարդող
ո՛չ մէկ պետական մարդ պիտի ուղէ նա-
խարարապետի պաշտօնն ստանձնել Յգիպ-
տոսի մէջ : » — Խօսելով Ռուսիոյ և Գերմա-
նիոյ ձեռնարկին վրայ , որք կ'ուզեն ան-
դամ ունենալ Ընդհանուր Պարտուց Յանձ-
նաժողովոյն մէջ , Նուպար փաշա ըսեր է .
« Այդով պիտի վերահաստատի օտար Գնդերն
որ , Խտիվին պատիւն ու ազգեցութիւնը
կ'որեւել , պատճառ տուաւ Արապիի ա-
պստամբութեան : Այսօր Խտիվին և նորա
նախարարաց ազգեցութիւնն և իշխանու-
թիւնը կը պահուին շնորհիւ ներկայութեան
անգլիական զօրաց , բայց ի՞նչ պիտի լինի
եթէ անգամ մը քաշուին երթան այդ զօր-
քեր : Մեր իշխանութիւնն նոյնչափ ոչինչ պի-
տի լինի յայնժամ որչափ էր յառաջագոյն » :

— Յգիպտական կառավարութեան պա-
տասխանն առ Գերմանիոյ և Ռուսիոյ դիւա-
նագիտական գործակաւտարս՝ որք խնդրած

էին որ իրենց կառավարութիւնը ևս ներկայացեալ լինին Հանրային պարտուց սընտուկին մէջ, տրուեցաւ դեկտ. 21ին :

Այս պատասխանին մէջ Նուպար փաշա կը հաստատէ թէ Եգիպտոս չէ կարող միայնակ փոփոխել Պարտուց յարգարման օրէնքըն . բայց որովհետեւ Ֆրանսա, Աւստրիա, և Իտալիա իրենց հաւանութիւնը տուած են Գերմանիոյ և Ռուսիոյ խնդրանաց, Եգիպտոս ալ պիտի փութայ ընկերակցիլ իրենց տեսակէտին՝ Պարտուց յարգարման օրէնքն ստորագրող բոլոր տէրութեանց միջեւ համաձայնութիւն գոյանալէ անմիջապէս յետոյ :

Այլ ծանուցուի թէ Գերմանիոյ և Ռուսիոյ դիւանագիտական գործակատարք անմիջապէս ծանուցագիր մը պիտի տան Նուպար փաշայի՝ այս պատասխանին վրայ իրենց դժգոհութիւնն յայտնելու համար :

—Նոր Օրլէանու մէջ դեկտ. 16ին բացուեցաւ Տիեզերական Արուեստահանդէս մը : Միացեալ Նահանգաց Նախագահն 1,500 միլիոն հեռաւորութենէ մը նախագահեց բացման հանդիսին : Ուաշինկըոնի պալատան մէջ, չլմպատեալ իւր նախարարներով, Խորհրդարանի անդամներով և դեսպաններով, արտասանեց բացման ճառ մը, որ քանի մը վայրկեան յետոյ կը կարդացուէր Նոր Օրլէանու Արուեստահանդիսին ընդունելութեան սրահին մէջ, ուր Նահանգապետն իւր պաշտօնատարներով և բազմաթիւ հիւրերով ներկայ էր : Յետոյ, Նախագահն Ուաշինկըոնէն ելեկտրական կուճակի մը դպչելով, շարժման մէջ դրաւ Նոր Օրլէանու Արուեստահանդիսին մեքենայներըն, որք բանիլ սկսան անմիջապէս : Առջի օրն Արուեստահանդէսն այցելեցին 30,000 անձինք :

—Սուաքիմէ կը հեռագրուի առ Թայմիլ թէ Օսման Տիկմայի բանակէն «վաւերական» լուրեր եկած են, սա խնաստով թէ Մէհտին մօտեցս դրեր է իւր տեղեկալին, ծանուցանելով թէ, սուրբ պատերազմն երկու տարի անընդհատ վարելէ յետոյ, իւր վերջին պարտութիւնը ի Տոնկուա և Անգլիացւոց յառաջխաղացումն օգնութեան կարօտ կ'ըլեն զինք : — Օսման Տիկմա կը փախաքէր 2,000 տնձէ բաղկացեալ Մուսիապ ցեղը զրկել Մէհտինն օգնութեան . բայց Օս-

ման Տիկմայի ոյժ տուող բոլոր Շէյխերն հակառակեցան, առարկելով որ եթէ Անգլիացւոց կողմէ յարձակում կրեն, խիստ քիչ մարդ կրնան հանել անոնց դէմ : Ուստի, Օսման Տիկմա պատասխաներ է Մէհտինն թէ չի կրնար զրկել սահանջուած օգնութիւնը :

—Հռոմէ կը հեռագրուի առ Տէյն Նեշ թէ Իտալիա որոշած է ընդարձակել իւր ստացուածքներ Կարմիր ծովու եզերաց վրայ, և թէ իւր այս խորհուրդ արժանացած է անգլ. կառավարութեան հաւանութեան, որուն հետ Իտալիա եգիպտական խնդրոյ նկատմամբ համաձայնելու վրայ է :

—«Աշխարհականացման» քաղաքականութիւնն օր ըստ օրէ յառաջ կը տարուի Ֆրանսայի մէջ : Զինուորական հիւանդանոցներու յատկացեալ քահանայներն ալ վերցուեցան, և դեկտ. 12ին, Երմոսցոյցի վիճաբանութեան այն մասին մէջ որ Բանակին ծախուց կը վերաբերէր, Պ. Ֆրէբէլ (Եպիսկոպոս) ի զուր ընդդիմացաւ հակակղերային այս նոր տնօրինութեան, զի 115ի դէմ 385 քուէով Երեսփոխանը որոշեցին աշխարհականացնել զինուորական հիւանդանոցներն ալ :

—Անգլիական լրագրաց մէջ բաւական ազմուկ կը հանուի «Մակեդոնիոյ» խնդրոյ մը վրայ, ուր գործուած հարստահարութեանց տեղեկագրեր կը զրկուին լրագրութեան, և դիմումներ կը լինին, մինչ յայտնի է թէ Մակեդոնիոյ Օսմանեան իշխանութիւնը բացորոշապէս կը ժխտեն այդ կարծեցեալ բռնութիւններ, սպանութիւններ, կեղեքումներ, առեւանգումներ, եւ .

—Դեկտ. 15ին Այբցիկի Գերագոյն Դատարանին առջեւ սկսաւ դատաստանն այն դաւադրաց որք Նիտէրվալտի ազգային յիշատակարանին մերկացման հանդիսի օրն Արձանին մօտ տեղ մը ուժանակ զետեղած էին Վիլհէլմ կայսրն սպաննելու դիտմամբ : Ամբաստանեալք ութ հոգի էին, ամենքն ալ յեղափոխական կուսակցութեան վերաբերող զրաշարներ և ուրիշ արհեստաւորներ : Դատարանն իւր վճիռը տուաւ դեկտ. 23ին, ի մահ դատապարտելով Բայնստորֆ, Ռիւբսի և Քիւհլէր անուն յանցապարտները :

—Հանրածանօթ գնդապետ Ալիսանոֆ վերջնապէս անուանեցաւ հրամանատար Մէրվի դաւառին :

Ն Ե Ր Ք Ի Ն

Բեդրսպուրկէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ Օսմանեան դեսպան Շաքիր բաշա դեկտեմբեր 15ին Կաջինայի պալատն երթալով հանդիսաւոր կերպիւ ընդունուեր է Վեհ. Զարին և Զարուհայն կողմէ, որք իրենց շուրջն ունէին կայսերական ընտանեաց անդամներն և բարձրաստիճան պալատականներն :

Դեսպանն՝ յանուն Վեհ. Սուլթանին Նիշանը-Իմթիագի ականակուռ պատուանշանը մատուցեր է Ալեքսանդր կայսեր և Շէֆազաթի պատուանշանը՝ Մարի Ֆէոտոբոյին կայսրուհայն :

Կայսրն և կայսրուհին խնդրեր են Վսեմ. դեսպանէն որ իրենց շնորհակալութիւնները մատուցանէ Վեհ. Սուլթանին թէ՛ այս համակրանաց և բարեկամութեան ապացոյցին համար, և թէ՛ այն փառաւոր ընդունելութեան համար զոր վերջերս Ն. Վեհափառութիւնն ըրաւ Միքայէլ Միսայիլովիչ իշխանին, Երէտզի պալատան մէջ :

—Մովսիսի սպայակոյտի անդամ Միրիլիվա Մէհմէտ փաշա Խտարէի Մախուսէի տնօրէն կարգուեցաւ Զիա պէյի տեղ :

Սթամուլ կըսէ թէ Զիա պէյի պաշտօնանկութեան շարժառիթ եղած են յիշեալ ընկերութեան վարչութեան մէջ երեւան ելած անկանոնութիւնք : Նորընտիր տնօրէնն, որ շաբաթ օրէն ի վեր իւր պաշտօնի գլուխն անցած է : Իւր ուսումն Ներսիսի մէջ կատարելագործած է, և վերջերս Բէնէ-Ֆայէ Սեֆայէ (Ուղեցոյց Նաւուց) անուն գործ մը հրատարակած :

—Վեհ. Սուլթանին հրամանաւ ոստիկանական բարեկարգութեան համար կանոնագիր մը ծրագրելու պաշտօնով Յանձնաժողով մը կազմուեցաւ, որուն անդամ ընտրուած են քաղաքասպետութեան բարձրագոյն պաշտօնատարներէն Յայիգ պէյ, որ միանգամայն նախագահն է Յանձնաժողովոյն, Պետական խորհրդոյ անդամներէն Նուրեան Յովհաննէս էֆէնտի և Ֆէրիտ պէյ, ոստիկանութեան նախարարի խորհրդականն և Կ. Պոլսոյ ոստիկանութեան տնօրէնն : Այս Յանձնաժողով առաջնորդ պիտի բռնէ իրեն քաղաքակիրթ ազգաց մէջ ի գործ դրուած ոստիկանական վերջին կա-

նոնագիրը : Կըսուի թէ ոստիկանութեան նախարարն արդէն ընդարձակ ծրագիր մը պատրաստած ունի, զոր Յանձնաժողովոյ նկատառութեան պիտի ներկայէ :

—Կ. Պոլսոյ Ամերիկեան դեսպան Ուալլէյս զօրավարն, որ ժամանակէ մ'ի վեր բացակայ կը գտնուէր մայրաքաղաքէս, վերադարձած լինելով, Գավազի առջեւ քարանթինա կ'սպասէ :

—Օսմանեան կայսերական Պանքան շաբաթուս սկիզբն 30,000 Օսմանեան ոսկի վճարեց ռուսական հիւպատոսարանին ի հաշիւ վերջին պատերազմէն վնասեալ ռուս հպատակաց կրած վնասուց հատուցման :

Հիւպատոսարանն որոշած լինելով ամբողջապէս վճարել 12,000 Փրանքէ աւելի չեղող պահանջներն, իսկ մնացեալ գումարն համեմատաբար, պահանջատեարք խորհեցան թէ այս կերպիւ կը վնասուին իրենք, ուստի և շաբաթուս մէջ ի ժողով գումարուելով, խորհրդակցեցան և որոշեցին բողոքագիր մ'ուղղել ի Բեդրսպուրկ, հիւպատոսարանի սոյն որոշման դէմ :

—Թուրքիոյ մէջ հողագործաց դասուն քիչ տոկոսով փոխատուութիւն ընելու նըպատակաւ քանի մ'եւրոպացի դրամատեարց կողմէ առաջարկուած պայմանները քննելու և խնդրուած արտօնութեան վրայ խորհրդակցելու համար Յանձնաժողով մը կազմուեցաւ, որում կը նախագահէ առեւտրական և երկրագործական նախարար Սուպհի փաշա :

—Կայսերական պալատան Միւշիւրներէն Հիւսէյն Հիւսնի փաշա՝ որ բաւական ժամանակէ ի վեր հիւանդ էր, վախճանեցաւ :

—Հէվալէ ունեցող սեղանաւորներէն իննսունեւհինգ անձանց ստորագրութեամբ աղերսագիր մը մատուցուած լինելով Կայսերական կառավարութեան, Առեւտրական, Գանձային, Կրթական և Էվգաֆի նախարարներէն բաղկացեալ Յանձնախումբ մը կազմուեցաւ այդ խնդրոյն կարգադրութեան համար :

—Օսմանեան Կ. Պանքայի Պոլսոյ ճիւղի տնօրէն Պ. Շարլը Լաֆոնթէն երեքաբարժի օրն իւր մահկանացուն կնքեց ի խոր ծերութեան : Հտնդուցեալը բազում տարիներ առեւտրական ասպարիզին վրայ ամենայն պատուաւորութեամբ գործելէ յետոյ, վեր-

Ջերմ պանքային Պոլսոյ ճիւղի տնօրինութիւնը կը վարէր, և հակառակ իւր ծեր հասակին, եռանդուն դործունէութիւն ցոյց կուտար իւր աշխատութեանց մէջ:

— Կէլիօլուի գաւառէն ելած առաջատի կառւն 1289 թուականէն սկսեալ տասն տարի պայմանաժամաւ մաքսատուրքէ ազատ կացուցուած լինելով, կտաւագործները կայսերական կառավարութեան այս շնորհէն օգուտ քաղած և իրենց արհեստին մէջ բաւական յառաջընթացութիւն ըրած էին: Թէրճէմանը Հադիօօթ կը ծանուցանէ թէ այս պայմանաժամաւ նախարարաց խորհրդոյ որոշմամբ և Վեհ. Սուլթանի վաւերացմամբ, տասն տարի եւս երկարաձգեցաւ:

— Էֆէնը Կաթի կը գրէ թէ Արապի փաշա գրեր է ի Լոնտրա որ թէ՛ գինքն ազատ թողուն Եգիպտոս վերադառնալ, յանձն կառնու յաղթել Մէհտիին: Բայց հաւանական չէ որ իւր առաջարկ ընդունուի:

Արաբական Էլ-Ձաֆան լրագիրն ալ կը կարծէ գիտնալ թէ Նտիֆն ի մօտոյ իսկատար ներում պիտի շնորհէ ամեն անոնց որք Արապի փաշայի ապստամբութեան գործին մասնակից էին և Եգիպտոս կը բնակին: Սակայն այս ներողութիւն անոնց միայն պիտի շնորհուի որք քաղաքական յանցանօք ամբաստանեալ են:

— Ոստիկանութեան նախարարութիւնը պաշտօնական աղբով մը ծանուցանելէ յետոյ թէ Չէրքէզաց պատմութիւն մը գրելու պատրուակաւ ոմանց կողմէ հանդանակութիւն մը բացուած է, կը զգուշացնէ հասարակութիւնն այդ տեսակ հանդանակութեանց մասնակցելէ:

— Կեսարիոյ թղթատարը կողոպտող աւազակներէն ետ առնուած 149,000 զրուշ պատրաստ դրամ և 52 կտոր այլ եւ այլ նիւթեր՝ Տիւզճէէն մայրաքաղաքս կը զըրկուին իրենց բուն տէրերուն յանձնուելու համար:

— Կը յիշուի թէ Վեհ. Սուլթանն անցեալներն հրամայած էր որ Նիշան Թաշիի բարձունքը դառնուած ընդարձակ դէտիին ներուն վրայ բուսաբանական և կենդանաբանական պարտէզ մը հաստատուի: Մոնիթէոր մասնաւոր աղբիւրէ մը կը տեղեկանայ թէ Վսեմ Արքայաժամ փաշա յիշեալ

պարտիկին տնօրէն կարգուեր է Կայսերական հրամանաւ:

— Դատական նախարար Վսեմ. Հասան Ֆէհմի փաշա յառաջիկայ չարթու Լոնտրա կուղեւորի յատուկ պաշտօնով:

Ա. Զ. Դ. Ս. Յ. Ի. Ն.

Կրօնական ժողովոյ չարթական նիստը գումարեցաւ այս երկուշարթի ընդ Ատենապետութեամբ Գեր. Խորէն Նար - Պէյ Սրբազանի եւ նախ քանի մ'անհատական խնդրովք զբաղեցաւ:

Ա. Նիկովիդիոյ առաջնորդ Գեր. Տ. Ստեփան վարդապետ Կրօնական ժողովոյ ներկայացաւ իրեն եղած հրաւերին համեմատ: Ատենապետ Սրբազանը բացատրութիւն պահանջեց յիշեալ առաջնորդէն՝ առանց հրամանի մայրաքաղաքէս Եալովա եպիսկոպոս մը տանելուն եւ քահանայական ձեռնադրութիւն կատարել տալուն համար: Նիկովիդիոյ առաջնորդը խոստովանեցաւ թէ՛ օրինաց հակառակ էր ըրածն և ներում խնդրեց: Ատենապետ Սրբազան զիտել տուաւ թէ՛ առաջնորդ մը պարտէր գիտնալ այս պիտի տարրական օրէնք մը, և բաց աստի, հարկ չէր Պոլսէն եպիսկոպոս տանիլ, քանի որ Նիկովիդիոյ վիճակին մէջ կայ եպիսկոպոս, այն է՝ Արմաշու վանուց Գեր. Վանահայրը: Ժողովն՝ յետ խորհրդակցութեան՝ ներեց Նիկովիդիոյ առաջնորդին և հրամայեց որ այսուհետեւ քահանայական ձեռնադրութիւն պէտք եղած ժամանակ ուղղակի Արմաշու Վանահօր դիմէ:

Չէնկիլէր գիւղէն ալ բողբոջիր հասած էր ընդդէմ Նիկովիդիոյ առաջնորդին: Որոշուեցաւ որ ժողովը գրաւոր բացատրութիւն պահանջէ առաջնորդէն:

Բ. Հաճընի ծանուցեալ խնդրոյն նկատմամբ Ատանայի դատական քննչին կողմանէ Բ. Դրան հաղորդուած տեղեկագրոյն պատճէնը, զոր Բ. Դուռն հաղորդած էր Պատրիարքարանին, կարդացուեցաւ: Տեղեկագրոյն եղրակացութիւնն էր թէ՛ խնդրոյ նիւթ եղած ամուսնութիւնը բռնութեամբ կատարուած չէ:

Կարդացուեցաւ նաեւ Կիլիկիոյ Տ. Մկրտիչ Կաթողիկոսին կողմանէ հասած հեռա-

գիրն, որ կը յայտնէր թէ Կիրակոս ետլու-
կոսոս եւ տիկին Նարկիզ կը բողոքեն յա-
նուն իիենց պատուոյ :

Այս պաշտօնական զեկուցմանց վրայ Ժո-
ղովն որոշեց պաշտօնական յայտարարու-
թեամբ հրատարակել յազգային լրագիրս
թէ Հաճընի ամուսնութեան մէջ բռնութիւն
ի գործ դրուած չէ :

Գ. Ժողովն որոշեց որ Նիկոմիդիոյ ազ-
գային դպրոցին մէջ Հայերէն լեզուի դա-
սախօսութեան պաշտօն վարող եւ Սոյ Ա-
թոռոյն միարան՝ Ռուբէն Գալֆայեան ա-
նուն սարկաւազը Կիլիկիոյ Տ. Մկիտիչ Կա-
թողիկոսին դիմէ՝ վկայական իեշպէս նաեւ
Նոկոմիդիոյ մէջ մնալու արտօնութիւն սաա-
նալու համար :

Դ. Մանուէլ Միրիճանեան անուն երի-
տասարդն, որ վերջին օրերս կառավարիչ
կարգուած էր Սամաթիոյ Սահակեան վար-
ժարանին մէջ, աշակերտի մը ձեռքէն նըշ-
խարն առած և պատուհանէն վար նետած
էր : Ժողովը գրած էր տեղւոյն քարոզչին որ
քննութիւն բանայ այս դէպքին վրայ : Քա-
րոզչին իւր քննութեան արդիւնքը տեղե-
կադրած է առ Ժողովն, հաստատելով յիշ-
եալ անհաճոյ դէպքն : Ժողովն որոշեց գը-
րել առ ուսումնական Խորհուրդն՝ որպէս զի
ետ առնու յիշեալ երիտասարդին ձեռքէն
իւր վկայականն և անունը ջնջէ ազգային
պաշտօնէից ցանկէն :

Ժողովն զբաղեցաւ նաեւ քանի մը ա-
մուսնական խնդրովք մինչեւ ժամ 11, եւ
որոշեց յաջորդ նստին մէջ հանրային խնդ-
րովք զբաղիլ :

— Այսօր Վսեմ. Քաղաքեան Յակոբ վա-
չայի անունն տարեդարձը լինելով, Կրօնա-
կան Ժողովոյ Ատենապետ Գեր. Խորէն Նար-
Պէյ Սրբազան և Պատրիարքական Տեղապահ
Գեր. Ռուստուքլեան Հայրը, Նորին Վսե-
մութեան ասպարանքը գնացին ի շնորհաւո-
րութիւն :

— Կիմանալք թէ՛ նախարարաց խորհուր-
դըն, հաստատելով նորընտիր Տեղապահին
ընտրութիւնը, Վեհ. Սուրբանին վաւերա-
ցումը խնդրած է :

— Այս օրերս նորէն խօսքեր կան Ամեն.
Խրիմեան Սրբազանի Վանէն Կ. Պոլիս հա-
ւիրման :

— Շարժուս սկիզբը Յունաց Պատրիար-
քարանէն վարդապետ մ'եկաւ Պատրիարքա-
րան՝ ի շնորհաւորութիւն նորընտիր Տեղա-
պահին :

— Վանէն լուր եկաւ ի պատրիարքարան
թէ Վանայ Առաջնորդ Գեր. Պօղոս եպիս-
կոպոս՝ Պաշտպէի վանուց հայր Բաղնուհի
Յովհաննէս վարդապետը բռնութեամբ եւ
ապօրինաւոր միջոցներով Լիմ անապատ քա-
սորել տուեր է :

Քաղաքական ժողովը կարեւոր անօրէ-
նութիւն մը պիտի ընէ այս մասին :

— Կիպրոսի ազգայինք գրած են ի Պատ-
րիարքարան թէ իրենք առաջնորդ կամ հո-
վիւ չեն ուզեր Կ. Պոլսէն :

— Բեդրասուրկէն կը գրեն մեզ հետեւ-
եալն .

«Ի Տէր հանդուցեալ Ներսէս Պատրիարքի
մահուան առթիւ բոլոր ուս թերթերում
տեղեկութիւններ երեւալին, նա մանաւանդ
գաւառական մամուլում. անտարբեր չէր
մնացել մինչեւ անգամ Տոմսկում հրատա-
րակուող Սէբէրէան թերթը : Պատկերազարդ
առաջնագոյն «Համալսարանային» — Վեֆէ
Նայե — Իւլէթ-Բոյէ — ուս շարժերթում
նոյնպէս դուրս եկան երջանկայիշատակ Ս.
Ներսէս Պատրիարքի պատկերն հանդերձ
կենսագրութեամբ : »

ՀԱՅ ԹԷՅԱՎԱՃԱՌ

Է Թահթիլ Գողոց, աւթէ-բէն Դօր, Բէ- 70

Այս վաճառատուն՝ որ մէկ տարիէ ա-
ւելի ժամանակէ հետէ իւր յաճախորդները
գոհացներու ջանք չէ խնայած, կը ծանու-
ցանէ թէ Չինաստանի և Ճապոնի բերքերէն
այս անգամ զանազան տեսակ ընտիր թէյեր
(չայ) բերել տուած է յատկապէս, եւ կը
խնդրէ սիրելի ազգայիններէ, մանաւանդ
գաւառացի Հայ Ժողովներէ որպէս զի
հաճին գէթ միանգամ ի մօտոյ տեսնել իւր
ապրանքներն և փորձել թէ՛ տեսական լա-
ւութիւնը, եւ թէ՛ գինեւոր աժանութիւնը :

ԸՆԴԱՐՁԱԿ
ՕՐԱՅՈՅՑ

1885 ՏԱՐԻՈՅ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՓՐԿՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆՊԱՆՈՅԻ

Գին 3 դահեկան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

(ԱՐԱՄԵԱՆ)

Այլ գտնուի ամէն Հայ գրավաճառաց քով :
Կեդրոնատեղին է Արամեան տպարան .
Զագմագճըլար , Յակոբեան խան թիւ 15 .

ԳՐԱՍԵՆԵԿԻ ՕՐԱՅՈՅՑ

ԶԱՐԴԱՐԵԱՆ

1885

Այս Օրացոյց այս տարի եւս հրատարակուած է աւելի կատարելագործեալ : Մէկ ակնարկով ցոյց կուտայ տարին , ամիսն , օրը , թէ՛ հին և թէ՛ նոր տուամարով , տաճկական ամիսներն և օրերն , եւրոպական , յունական և հրէական տօներն և օրերն , իւրաքանչիւրն ամեն ազգին յատուկ գրերով ու թընուանշաններով :

Զարդարեան Օրացոյցը պատէն կախելու սահմանուած օրացոյցներու մէջ կատարելագոյնն է այժմ :

Այլ գտնուի բոլոր գրավաճառաց քով :

ԹՂԹԱՎԱՃԱՌ. ԵՒ ԴՐԱՎԱՃԱՌ.

Զ. ԹՈՐՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ .

ՊԵՒՆ , ԲԵԺ ԺԿԻՆԻ ԿՐԷՔ , ԲԵՒ 46

Սոյն վաճառատունն որ մեծ փոփոխութիւն կրած է այժմ և ընդարձակուած , պատիւ ունի ծանուցանել իւր յաճախորդաց ատտ և ի գաւառս թէ պատրաստ է ամէն լեզուով գըրեանք , աշխարհացոյցք և ամէն տեսակ թղթեղէնք տալ աժան գներով :

Եւրոպական հետաքրքրաշարժ պատկերներ . գպրոցական և գծագր . պիտոյք և Գաղամիա 1885 տարւոյ :

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ

ԵՐԿԱՍԻՐԵՅ

ԳԵՐ. Գ. Ծ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՅ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ (ԱՐԱՄԵԱՆ)

Այլ վաճառուի ի գին 10 դրուչի բոլոր Հայ գրավաճառաց և Մաքսի կարգը թղթաւաճառ Պ. Զարեհ Թորոսեանի քով : Կեդրոնատեղին է Արամեան տպարան Պոլիս Յակոբեան խան :

Գերազատել Հեղինակին սոյն նոր գործ , արժանի ծնունդ իւր տաղանդին և հմտութեան , արդիւնք ուշադիր և մանրակրկիտ խուզարկութեանց և քննութեանց որ կը պարունակէ Հայկական գաւառաց տեղագրութիւնն , վիճակագրութիւնն , հիքեայէթներ , գեղջկական երգեր , բառեր և , ամիսիկեալ իւր 400 երես պարունակող հատորի մը մէջ լոյս տեսաւ Արամեան վայելուչ տպագրութեամբ :

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ԲԱՌԱԳԻՐԲ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ

Այլ բովանդակէ բոլոր գործնական , բառերը , գործնական կենաց , վաճառակաւութեան , ճարտարութեանց , արուեստից , բնական և մասնական գիտութեանց մէջ գործածուած բազմաթիւ բացատրութիւնք , նորաբանութիւնք և օտար բառեր , գործնական յատուկ անուանք , բայից խոնարհմունք և անուանց հոլովմունքը , նոյնանշանք և այլն :

Աշխատութեաց

Հ. ԱԻՆՏԻԲ ՎՐԴ. ԿՈՅԼԱԻՆԱՆ

ՄԽԻԹ. ՈՒԽՏԷՆ

ՎԿԷՆԱ , ՄԻԽԻԹԵԱՆ Տպարան 1884

Մինչեւ հիմակ տաւանական թերթով երկու տետր հրատարակուած է : Եւ ինչպէս ծանօթութենէն կը տեսնենք , ամէն մէկ տետրին գինն է մէկ ռուբլի կամ 2 ֆրանք 75 սանդիմ : Բայց ինչպէս գիտենք երկասիրութիւնը բաժանագրութեան ճանքով ալ կրնայ ըստացուիլ , որ շատ աժան է . վասն զի ամբողջ գործքին բաժանագրութեան գինն է 5 աւստրիական ֆիօրլին կամ 10 ֆրանք , որ տետր տետր գնելէն անհամեմատ նուազ կուգայ :

Յանկացողք կարող են ստանալ գործքը՝ Վիէննայի Միխիթարեան Միաբանութեան տպարանը և կամ Պր. Զաւիկ Բոքովիչին մօտ :

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԴԱՐԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԿՐԱԿԱՐԱՆԱՑ ՆԻ ԾԽՆԵԼՈՒՁԻ ԽՈՂՈՎԱԿԱՑ

Միակ միտքանոց վիճենայի Ռեւտ Կէպիւրք վաճառատան կրակարանաց
ԱՏԱՂՁԱԳՈՐԾԻ ՆԻ ՀԻՒՍՆԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ՀԵՆՐԻԿ ԼԱՆԺ

24, Բէրլին—Բալար, Ղալաթիա

ՊՂՆՁԷ, ՁՈՒԼԱԾՈՑ ՆԻ ԾԵԾՈՒՄԾ ԵՐԿԱԹԷ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԽՈՀԱՆՈՑԻ ԳՈՐԾԵԱՑ

ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՆՈՑ

ԽՈՀԱՆՈՑԻ ՁՄԻՆԷՆԵՐ

ԱՂՏՆԻ ՀԻՒՍՆԻԳՈՒԹԻՒՆՔ

Գրողովին կը բժշկուին իմ
ղրութեամբս, հիմնեալ գի-
տական նոր խուզարկութեանց
վրայ, նոյն խի ամենէն աւելի
յուսահատ պարապայից մէջ,
առանց երբեք խանդարեալ
գործարանները: Նմանապէս կը
բժշկուին երկրասարդութեան ժողովը,
ջրայրութեանց և անկարողութեանց
տխուր հետեւանքները:

Գաղտնապահութիւնն երաշխաւորեալ


Կը խնդրուի հիւանդութեան ճիշդ նկա-
րագրութիւնը ղրկել:

ՏՈՒԹՈՐ ՊԷԼԼԱ

Անդամ բազմաթիւ Գիտական
ընկերութեանց

6, Բլա տը լա Նասիոն փարիզ

ՍԵՂԱՆԻ ԸՄՊԵԼԻ



ՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ ԳԵՐՄԱՆԻ

Նման « Շարժութիւն » ի գինւոյն,
տխորժամ համ և յոյժ առողջարար
ըմպելի մ'է և մեծապէս կը գիւ-
րացնէ մարսողութիւնը:

Դիւսաւորապէս կը գտնուի Պ.
Պէրլէն եղբարց քով, Ղալաթիա,
Սիթէ Ֆրանսէզ:

Արտոնատէր Կ. Ս. Իիթիիճեմն
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ